

«Դպիր»
մանկավարժական
հանդես

ԴՄԻՏՐԻ
ԼԻԽԱԶՅՈՎ

ՆԱՄԱԿՆԵՐ ԲԱՐՈՒ ԵՎ ԳԵՂԵՑԻԿԻ ՄԱՍԻՆ

Բովանդակություն

Առաջին նամակ

Երկրորդ նամակ

Երրորդ նամակ

Չորրորդ նամակ

Հինգերորդ նամակ

Վեցերորդ նամակ

Իններորդ նակակ

Տասներորդ նամակ

Տասնմեկերորդ նամակ

Տասներկուերորդ նամակ

Տասներեքերորդ նամակ

Տասնչորսերորդ նամակ

Տասնհինգերորդ նամակ

Տասնվեցերորդ նամակ

Տասնյոթերորդ նամակ

Տասնութերորդ նամակ

Տասնիններորդ նամակ

Քսաներորդ նամակ

Քսանմեկերորդ նամակ

Քսաներկուերորդ նամակ

Քսաներեքերորդ նամակ

Քսանչորսերորդ նամակ

Քսանհինգերորդ նամակ

Քսանվեցերորդ նամակ

Քսանյոթերորդ նամակ

Քսանութերորդ նամակ

Քսանիններորդ նամակ

Երեսուներորդ նամակ

Երեսունմեկերորդ նամակ

Երեսուներկուերորդ նամակ

Քառասունվեցերորդ նամակ



Թանկագին բարեկամներ



Ձեզ ենք ներկայացնում հատվածներ անցած դարի խոշորագույն գիտնականներից մեկի՝ Դմիտրի Լիխաչյովի «Նամակներ բարու և գեղեցկության մասին» գրքից: Այս նամակներն ուղղված են ոչ թե որոշակի մեկին, այլ բոլոր ընթերցողներին, նախ և առաջ՝ երիտասարդներին, որ դեռ պիտի ապրել սովորեն և քայլեն կյանքի դժվար ուղիներով:

Այս գիրքը հատկապես արժեքավոր է դարձնում այն փաստը, որ գրքի հեղինակը՝ Դմիտրի Լիխաչյովը, մարդ է, ում անունը հայտնի է բոլոր մայրցամաքներում, ռուսական և համաշխարհային մշակույթի երևելի գիտակ է, տարբեր երկրների ակադեմիաների անդամ:

Միայն հեղինակավոր մարդը կարող է խորհուրդ տալ:

Հակառակ դեպքում այդ խորհուրդներին չեն հետևի:

Իսկ խորհուրդները, որ կարելի է ստանալ այս գիրքը կարդալով, վերաբերում են կյանքի բոլոր կողմերին:

Սա իմաստությունների ժողովածու է, բարյացակամ Ուսուցչի խոսք, ում գլխավոր տաղանդներից մեկը մանկավարժական տակտն է և աշակերտների հետ խոսելու կարողությունը:

Այս գիրքը թարգմանված է աշխարհի շատ երկրներում և տարբեր լեզուներով:

Ահա, թե ինչ է գրում Դ. Լիխաչյովը ճապոներեն հրատարակության նախաբանում՝ բացատրելով, թե ինչու է գրել այս գիրքը.

«Իմ խորին համոզմամբ բոլոր ժողովուրդների համար բարին և գեղեցիկը նույնն են: Նույնն են երկու իմաստով. բարին և գեղեցիկը հավերժական ուղեկիցներ են, նրանք միասնական են և նույնն են բոլոր ժողովուրդների համար:

Սուտը չարիք է բոլորի համար: Շիտակությունն ու ճշմարտացիությունը,

ազնվությունն ու անշահախնդրությունը միշտ բարիք են:

Իմ «Նամակներ բարու և գեղեցկության մասին» գրքում, որը նախատեսված է երեխաների համար, փորձում եմ ամենապարզ հիմնավորումներով բացատրել, որ բարու ետևից գնալը մարդու համար ամենընդունելի և միակ ճանապարհն է: Այն փորձված է, հուսալի, օգտակար թե՛ առանձին մարդու, թե՛ ամբողջ հասարակության համար:

Իմ նամակներում չեմ փորձում բացատրել, թե ինչ է բարին, և ինչու է բարի մարդը ներքուստ գեղեցիկ և ներդաշնակ ինքնին, հասարակության և բնության հետ:



Բացատրություններ, սահմանումներ ու մոտեցումներ շատ կարող են լինել: Ես այլ բանի եմ ձգտում՝ կոնկրետ օրինակների, որ բխում են մարդկային բնույթի ընդհանուր հատկություններից:
Ես բարու և դրան ուղեկցող գեղեցկության ըմբռնումները որևէ աշխարհայացքի հետ չեմ կապում: Իմ օրինակները գաղափարայնացված չեն, քանի որ ցանկանում եմ դրանք երեխաների համար մեկնաբանել ինչ-որ աշխարհայեցական սկզբունքների նրանց հետևել սկսելուց առաջ:
Երեխաները շատ են սիրում ավանդույթները, հպարտանում են իրենց տնով, ընտանիքով, ինչպես և բնակավայրով: Բայց նրանք սիրով հասկանում են ոչ միայն սեփական, այլ նաև ուրիշների ավանդույթները, ուրիշի աշխարհայացքը, ընկալում են այն ընդհանուրը, որը կա բոլոր մարդկանց մեջ:
Երջանիկ կլինեմ, եթե ընթերցողը, ինչ տարիքի էլ լինի (չէ՞ որ պատահում է, որ մեծահասակներն էլ են մանկական գրքեր կարդում), իմ նամակներում գտնի ինչ-որ մաս, որի հետ համաձայն կլինի:
Համաձայնությունը մարդկանց, տարբեր ժողովուրդների միջև ամենաթանկարժեքն էրան է, և մարդկությանը հիմա ամենաանհրաժեշտը է:

ՆԱՄԱԿՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Տարեց մարդու ցանկացած զրույցը երիտասարդի հետ դառնում է ուսուցում: Միշտ այսպես է եղել և, հավանաբար, այսպես էլ կլինի: Կաշխատեմ հակիրճ լինել և միայն իմ ապրած կյանքի փորձը փոխանցել, ինձ համար ամենակարևորի մասին խոսել՝ ինչպես որ պատկերացնում եմ:
Ընթերցողի հետ զրույցի համար նամակների ձևն եմ ընտրել: Սա, իհարկե, պայմանական ձև է: Իմ նամակներն ընթերցողներին պատկերացնում եմ որպես ընկերների: Նամակներն ընկերներին ուղղելը ինձ ուղղակի գրելու հնարավորություն է տալիս:
Ինչո՞ւ եմ նամակներս կազմել հատկապես այս ձևով: Իմ նամակներում սկզբում գրում եմ կյանքի նպատակի և իմաստի մասին, վարքի գեղեցկության մասին, հետո անցնում եմ շրջակա աշխարհի գեղեցկությանը, արվեստի ստեղծագործություններում արտահայտված գեղեցկությանը: Այդպես եմ անում, քանի որ շրջապատի գեղեցկությունն ընկալելու համար մարդ ինքը հոգեպես գեղեցիկ, խորը պիտի լինի, կյանքում ճիշտ դիրքորոշում ունենա: Փորձե՛ք հեռադիտակը դողդողացող ձեռքերով բռնել. ոչինչ չեք տեսնի:

Առաջին նամակ Մեծը փոքրի մեջ

Նյութական աշխարհում մեծը հնարավոր չէ փոքրի մեջ տեղավորել: Իսկ հոգևոր արժեքների ոլորտում այդպես չէ. փոքրի մեջ անհամեմատ ավելի մեծը կարող է տեղավորվել, բայց եթե փոքրը փորձենք մեծի մեջ տեղավորել, ապա մեծը



կադադարի գոյություն ունենալուց: Եթե մարդը մեծ նպատակ ունի, դա պետք է ամեն տեղ արտահայտվի, նույնիսկ ամենաաննշան բաներում: Աննշմար և պատահական բաներում պետք է ազնիվ լինես, միայն այդ դեպքում ազնիվ կլինես նաև քո մեծ պարքը կատարելիս: Մեծ նպատակն ամբողջությամբ է համակում մարդուն, դրսևորվում է նրա յուրաքանչյուր արարքում, և չի կարելի կարծել, թե ստոր միջոցներով բարի նպատակի կարելի է հասնել:

«Նպատակն արդարացնում է միջոցները» ասացվածքը կործանարար է ու անբարոյական: Այս բանը շատ լավ է ցույց տվել Դոստոևսկին իր «Ոճիր և պատիժ» ստեղծագործության մեջ: Այդ ստեղծագործության գլխավոր գործող անձը՝ Ռադիոն Ռասկոլնիկովը, կարծում էր, թե սպանելով գարշելի պառավ-վաշխառուին՝ փող կհայթայթեր, որի միջոցով հետո մեծ նպատակների կհասներ և բարերարություն կաներ մարդկությանը, բայց հետո ներքուստ կործանվեց: Նպատակը հեռու էր և անիրականանալի, իսկ հանցագործությունն իրական էր, սարսափելի էր և ոչ մի կերպ չէր կարող արդարացվել: Ստոր միջոցներ գործադրելով՝ չի կարելի բարձր նպատակների ձգտել: Պետք է միատեսակ ազնիվ լինել ինչպես մեծի, այնպես էլ փոքրի մեջ:

Մեծը փոքրի մեջ պահպանելու ընդհանուր կանոնը պետք է նաև գիտության մեջ: Գիտական ճշմարտությունն ամեն ինչից թանկ է, և գիտական հետազոտության բոլոր մանրուքներում ու գիտնականի կյանքում պետք է դրան հետևել: Իսկ եթե գիտության մեջ գիտնականը ձգտի «մանր» նպատակների, փաստերին հակասող «ուժային» ապացույցների, եզրակացությունների «հետաքրքիր» կամ տպավորիչ լինելուն, բոլոր միջոցներով առաջ գնալու, ապա նա կկործանվի: Հնարավոր է, որ ոչ միանգամից, բայց վերջին հաշվով՝ անպայման: Երբ սկսում են չափազանցնել հետազոտության ընթացքում ստացված արդյունքները կամ թեկուզ դույզն-ինչ նենգափոխում են դրանք, և գիտական ճշմարտությունը երկրորդ պլան է մղվում, գիտությունը դադարում է գոյություն ունենալուց, և ինքը գիտնականը վաղ թե ուշ դադարում է գիտնական լինելուց:

Մեծը բացարձակապես ամեն ինչի մեջ պետք է պահպանել: Այդ դեպքում ամեն ինչ հեշտ ու հանգիստ կլինի:

Երկրորդ նամակ Երիտասարդությունն ամբողջ կյանքն է

Երբ սովորում էի դպրոցում, հետո համալսարանում, ինձ թվում էր, թե իմ «հասուն կյանքը» բոլորովին այլ պայմաններում է ընթանալու, կարծես այլ աշխարհում, և ինձ բոլորովին ուրիշ մարդիկ են շրջապատելու: Ներկայից ոչինչ չի մնալու... Իսկ



իրականում բոլորովին այլ բան եղավ: Իմ հասակակիցներն ինձ հետ մնացին: Ոչ բոլորը, իհարկե. շատերին մահը տարավ: Այնուամենայնիվ երիտասարդության ընկերները ամենահավատարիմը, մշտականը եղան: Ծանոթների շրջանակը չափազանց ընդարձակվեց, բայց իսկական ընկերները մնացին հները: Իսկական ընկերները երիտասարդ հասակում են ձեռք բերվում: Հիշում եմ, որ մորս մտերիմ ընկերուհիները միայն գիմնագիայի ընկերուհիներն էին: Հորս ընկերները նրա համակուրսեցիներն էին: Ինչքան որ ես դիտարկել եմ, ընկերանալու հակումը տարքի հետ նվազում է: Երիտասարդությունը մերձենալու ժամանակ է: Պետք այս մասին հիշել և ընկերներին պահպանել, քանի որ իսկական ընկերությունը շատ է օգնում և՛ վշտի, և՛ ուրախության պահին: Չէ՞ որ ուրախության ժամանակ էլ է օգնություն պետք. օգնություն, որպեսզի ուրախությունը հոգու ամբողջ խորությամբ զգաս, զգաս և փոխանցես: Չփոխանցված ուրախությունն ուրախություն չէ: Երջանկությունը մարդուն փչացնում է, եթե նա միայնակ է վայելում: Իսկ երբ վրա է հասնում դժբախտության, կորստի ժամանակը, կրկին չի կարելի միայնակ լինել: Վա՛յ այն մարդուն, ով մենակ է:

Այդ պատճառով պահպանե՛ք երիտասարդությունը մինչև խոր ծերություն: Գնահատե՛ք այն լավը, որ ձեռք եք բերել երիտասարդ տարիքում, մի՛ մսխեք երիտասարդության գանձերը: Երիտասարդ հասակում ձեռք բերած ոչինչ երբեք անհետ չի կորչում: Երիտասարդ հասակում դաստիարակված սովորությունները պահպանվում են ամբողջ կյանքի ընթացքում: Աշխատելու հմտությունները՝ նույնպես: Վարժվի՛ր աշխատանքին, և աշխատանքը հաճույք կպատճառի ամբողջ կյանքի ընթացքում: Իսկ դա որքա՞ն կարևոր է մարդկային երջանկության համար: Ծույլ, մշտապես աշխատանքից ու ջանք թափելուց խուսափող մարդուց դժբախտ մարդ չկա...

Ինչպիսին երիտասարդ հասակում ես, այդպիսին ես նաև ծերության օրով: Երիտասարդ տարիքի լավ հմտությունները կհեշտացնեն կյանքը, վատերը՝ կդժվարացնեն ու կբարդացնեն:

Մի բան էլ ասեմ: Ռուսական մի առած կա. «Ջահել օրվանից պատիվդ պահպանի՛ր»: Երիտասարդ հասակում կատարած բոլոր արարքները մնում են հիշողության մեջ: Լավերը կուրախացնեն, իսկ վատերը թույլ չեն տա քնել:

Երրորդ նամակ Ամենամեծը

Իսկ ո՞րն է կյանքի ամենամեծ նպատակը: Կարծում եմ՝ մեր շրջապատում բարին ավելացնելը: Իսկ բարիքը նախ և առաջ բոլոր մարդկանց երջանկությունն է: Այն



շատ բաղադրիչներից է կազմվում, և ամեն անգամ կյանքը մարդու առաջ խնդիր է դնում, որը պետք է կարողանա լուծել: Ե՛վ փոքր հարցում կարելի է մարդուն լավություն անել, և՛ մեծի մասին կարելի է մտածել, բայց մեծն ու փոքրը հակադրել չի կարելի: Ինչպես արդեն ասել եմ, շատ բաներ մանրուքներից են սկսվում, փոքր հասակում և մոտ մարդկանց նկատմամբ են ծնվում:

Երեխան սիրում է իր մորը, հորը, եղբայրներին ու քույրերին, իր ընտանիքը, իր տունը: Աստիճանաբար ընդարձակվելով՝ նրա կապվածությունը տարածվում է դպրոցի, գյուղի, քաղաքի, ամբողջ երկրի նկատմամբ: Իսկ սա արդեն շատ խորը և մեծ զգացում է, չնայած այստեղ էլ պետք չէ կանգ առնել, և պետք է մարդու մեջ մարդուն սիրել:

Պետք է հայրենասեր լինել, բայց ոչ ազգայնամոլ: Այն պատճառով, որ քոնն ես սիրում, յուրաքանչյուր ուրիշ ընտանիք ատելու կարիք չկա: Կարիք չկա ատելու մյուս ազգերին այն պատճառով, որ հայրենասեր ես: Հայրենասիրության ու ազգայնամոլության մեջ մեծ տարբերություն կա: Առաջինը սեփական երկրի նկատմամբ սերն է, երկրորդում ատելություն կա բոլոր մյուսների նկատմամբ: Բարության մեծ նպատակը փոքրից է սկսվում՝ մերձավորներին բարիք կամենալուց, բայց ընդարձակվելով հարցերի ավելի լայն շրջանակ է ընդգրկում:

Դա ջրի մակերևույթի շրջաններին է նման: Սակայն ջրի վրայի շրջանները մեծանալով թուլանում են: Իսկ սերն ու ընկերությունը, աճելով և շատերի վրա տարածվելով, նոր ուժ են ձեռք բերում, ավելի են վեհանում, մարդն էլ՝ դրանց կենտրոնը, ավելի իմաստնանում է:

Սերը պետք է անպատասխանատու չլինի, այլ խելացի պիտի լինի: Դա նշանակում է, որ նա պետք է միահյուսվի ինչպես սիրած մարդու, այնպես էլ շրջապատողների թերությունները նկատելու, դրանց դեմ պայքարելու կարողության հետ: Նա պետք է միավորվի խելքի հետ, անհրաժեշտը սին ու կեղծից տարբերելու կարողության հետ: Նա պետք է կույր չլինի: Կույր հիացումը (դա նույնիսկ սեր չես համարի) սարսափելի հետևանքների կարող է հանգեցնել: Իր երեխայի ամեն ինչով հիացող և ամեն ինչ խրախուսող մայրը կարող է բարոյապես խեղված մարդ դաստիարակել:

Գերմանիայի նկատմամբ կույր հիացումը («Գերմանիան ամեն ինչից բարձր է».- ասվում էր գերմանական ազգայնամոլական երգում) հասցրեց նացիզմի, Իտալիայի նկատմամբ կույր հիացումը՝ ֆաշիզմի:

Բարության հետ միավորած խելքն է իմաստությունը: Առանց բարության խելքը խորամանկությունն է: Իսկ խորամանկությունն աստիճանաբար հյուծում է և վաղ թե ուշ խորամանկի դեմ շրջվում: Այդ պատճառով էլ խորամանկությունն ստիպված է քողարկվել: Իսկ իմաստությունը բաց է և վստահելի: Նա չի խաբում ուրիշներին և ամենից առաջ՝ հենց իմաստուն մարդուն: Իմաստությունը իմաստունին բարի համբավ և հաստատուն երջանկություն է բերում, երկարամյա և հուսալի երջանկություն և ապահովում է խղճի հանգստություն, որը ծերության տարիներին ամենագնահատելին է:



Ինչպե՞ս արտահայտեմ այն ընդհանուրը, որ կա իմ երեք պնդումներ մեջ՝ «Մեծը փոքրի մեջ», «Երիտասարդությունը՝ հավերժ» և «Ամենամեծը»: Այն կարելի է արտահայտել մի բառով, որը կարող է նշանաբան դառնալ՝ «Հավատարմություն»: Հավատարմություն այն բարձր սկզբունքներին, որոնցով պետք է մարդն ուղղորդվի մեծ և փոքր հարցերում, հավատարմություն իր անբասիր երիտասարդության, իր հայրենիքի (այդ հասկացության լայն և նեղ իմաստներով), հավատարմություն ընտանիքի, ընկերների, քաղաքի, երկրի, ժողովրդի նկատմամբ: Վերջին հաշվով հավատարմությունը հավատարմություն է ճշմարիտի նկատմամբ՝ ճշմարիտ-իսկության, ճշմարիտ-արդարության:

Չորրորդ նամակ Ամենամեծ արժեքը կյանքն է

«Ներշնչե՛ք, արտաշնչե՛ք, արտաշնչե՛ք»: Մարմնամարզության հրահանգիչի ձայնն եմ լսում. «Որպեսզի ամբողջ կրծքով ներշնչեք, պետք է մի լավ արտաշնչեք»: Նախ սովորեք արտաշնչել, ազատվել «գործածված օդից»:

Կյանքը ամենից առաջ շնչառություն է: «Հոգի», «ոգի»... Սակայն երբ մարդ մահանում է, ամենից առաջ դադարում է շնչել: Հնուց են այդպես մտածել: «Շունչը փչել է»,- նշանակում է «մահացել է»:

«Խեղդուկ» լինում է տանը, «խեղդուկ» է և բարոյական կյանքում: Մի լավ արտաշնչենք բոլոր մանր հոգսերը, առօրյա կյանքի ամբողջ ունայնությունը, ձերբազատվենք, թափ տանք այն ամենը, ինչը խոչընդոտում է մտքի շարժմանը, ինչը ճնշում է հոգին, մարդուն թույլ չի տալիս ընկալել կյանքը, նրա արժեքները, գեղեցկությունը:

Մարդը միջտ պետք է մտածի իր և մյուսների համար ամենակարևորի մասին՝ դեն նետելով դատարկ հոգսերը:

Պետք է մարդկանց նկատմամբ բաց լինել, համբերատար, նրանց մեջ փնտրել լավագույնը: Ամենալավը, ուղղակի «լավը», «թաքնված գեղեցկությունը» փնտրելու և գտնելու կարողությունը մարդուն հոգեպես հարստացնում է:

Բնության մեջ, ավանում, քաղաքում, փողոցում, էլ չխոսելով մարդու մասին, բոլոր մանրուքների պատենշի միջից գեղեցիկը նկատել. դա նշանակում է ընդարձակել կյանքի ոլորտը, այն կենսական տարածության ոլորտը, որտեղ մարդն ապրում է:

Ես երկար եմ փնտրել այս բառը՝ ոլորտ: Սկզբում ինքս ինձ ասում էի. «Պետք է ընդլայնել կյանքի սահմանները». սակայն կյանքը սահմաններ չունի: Դա ցանկապատով՝ սահմաններով, շրջափակված հողակտոր չէ: Հենց այս պատճառով էլ «կյանքի սահմաններն ընդլայնելը» իմ միտքն արտահայտելու համար պիտանի չէ՞ «Կյանքի հորիզոնն ընդարձակելն» ավելի լավ է, բայց էլի այն չէ: Մաքսիմիլիան Վոլոշինը իր հորինած մի լավ բառ ունի՝ «աչքածիր»: Դա այն ամենն է, որ



աչքը կարող է ընդգրկել, տեղավորել: Բայց մեր կենցաղային գիտելիքների սահամանափակությունն այստեղ էլ է խանգարում: Կյանքը չի կարելի հանգեցնել կենցաղային տպավորություններին: Պետք է կարողանանք զգալ և նույնիսկ նկատել այն, ինչը մեր ընկալումներից դուրս է, պետք է նորի բացահայտման կամ հնարավոր հայտնաբերման «նախազգացողություն» ունենանք: Աշխարհում ամենաթանկ բանը կյանքն է՝ ուրիշինը, սեփականը, կենդանական աշխարհի և բույսերի կյանքը, մշակույթի կյանքը, կյանքն իր ամբողջ տևողությամբ՝ և՛ անցյալում, և՛ ներկայում, և՛ ապագայում: Իսկ կյանքն անվերջ խորն է: Միշտ հանդիպում ենք ինչ-որ բանի, որ առաջ չէինք նկատել, որը հիացնում է իր գեղեցկությամբ, անսպասելի իմաստությամբ, անկրկնելիությամբ:

Հինգերորդ նամակ Որն է կյանքի իմաստը

Սեփական գոյության նպատակը տարբեր ձևերով կարելի է սահմանել, բայց նպատակ անպայման պետք է լինի. հակառակ դեպքում դա ոչ թե կյանք կլինի, այլ անիմաստ գոյություն:

Կյանքում նաև սկզբունքներ պետք է ունենալ: Նույնիսկ ճիշտ կլինի, որ դրանք օրագրում շարադրվեն, բայց որպեսզի օրագիրն «իսկական» լինի, այն ուրիշին ցույց տալ չի կարելի՝ միայն ինքդ քեզ համար պետք է գրես:

Կյանքում մի կանոն կա, որ յուրաքանչյուր մարդու համար, նրա կյանքի նպատակի մեջ, նրա կյանքի սկզբունքներում, նրա վարքում պիտի լինի՝ կյանքը պետք է արժանապատվորեն ապրել, որ հետո հիշելիս չամաչես:

Արժանապատվությունը բարություն, մեծահոգություն, նեղմիտ եսասեր չլինելու, արդարամիտ, լավ ընկեր լինելու, օգնելով ուրախանալու կարողություն է պահանջում:

Կյանքի արժանապատվության համար պետք է մանր, նաև ոչ մանր հաճույքներից հրաժարվել կարողանաս... Ուրիշների առաջ սխալն ընդունելը, ներողություն խնդրելն ավելի լավ է, քան խաբելն ու խորամանկելը:

Խաբելով մարդը նախ և առաջ ինքն իրեն է խաբում, քանի որ կարծում է, թե ինքը լավ է խաբել, մինչդեռ մարդիկ հասկացել, բայց քաղաքավարությունից ելնելով՝ լռել են:

Վեցերորդ նամակ Նպատակ և ինքնագնահատական

Երբ մարդը գիտակցաբար կամ ենթագիտակցորեն իր կյանքի համար Նպատակ, կենսական խնդիր է ընտրում, դրա հետ նա ակամա իրեն գնահատում է: Այն



բանից, թե մարդն ինչի համար է ապրում, կարելի է դատել նրա ինքնագնահատականի մասին՝ բա՛րձր է, թե՛ ցածր:

Եթե մարդը բոլոր տարրական նյութական բարիքները ձեռք բերելու խնդիրն է դնում իր առջև, նա իրեն այդ նյութական բարիքների մակարդակով է գնահատում՝ որպես վերջին մոդելի ավտոմեքենան ունեցողի, որպես շքեղ ամառանոցի տիրոջ, որպես սեփական կահույքի մասի...

Եթե մարդն ապրում է, որպեսզի մարդկանց բարիք բերի, հիվանդությունների ժամանակ նրանց տառապանքը թեթևացնի, մարդկանց ուրախություն պատճառի, ապա նա իրեն այդ մարդկայնության մակարդակով է գնահատում: Նա իր առջև մարդուն արժանի նպատակ է դնում:

Միայն կենսականորեն անհրաժեշտ նպատակն է մարդուն արժանապատիվ ապրելու և իսկական հրճվանք զգալու հնարավորություն տալիս: Այո, հրճվանք: Ինքներդ դատեք՝ եթե մարդն իր առջև կյանքում բարին ավելացնելու, մարդկանց երջանկություն բերելու խնդիր է դնում, ի՞նչ փորձանքի կարող է նա գալ:

Նրա՞ն չես օգնել, ում պետք էր: Բայց շա՛տ են մարդիկ, որ օգնության կարիք չունեն: Եթե բժիշկ ես, հնարավոր է և, որ մի հիվանդի էլ ճիշտ չես ավտորոշե՞լ: Այդպիսի բան ամենալավ բժիշկներին էլ պատահում է: Բայց արդյունքում դու ավելի շատ օգնել ես, քան չես օգնել: Սխալներից ոչ ոք ապահովագրված չէ: Բայց ամենակարևոր սխալը՝ ճակատագրական սխալը, կյանքի հիմնական խնդրի սխալ ընտրությունն է: Պաշտոնդ չբարձրացրին, տխրում ես: Հավաքածուիդ համար դրոշմանիշ գնել չհասցրիր, տխրում ես: Ինչ-որ մեկի կահույքը կամ մեքենան քոնից լավն է, տխրում ես, այն էլ ինչպե՛ս:

Իր խնդիրը կարիերան կամ ձեռքբերումը դարձնելով՝ մարդ արդյունքում ավելի շատ տխրում է, քան ուրախանում, և ենթակա է լինում ամեն ինչ կորցնելու վտանգին: Իսկ ի՞նչ կարող է կորցնել այն մարդը, որն ուրախանում է իր յուրաքանչյուր բարի գործի համար: Միայն թե կարևոր է, որ բարիքը, որը մարդ գործում է, նրա ներքին պահանջմունքը լինի, բխի խելացի սրտից, այլ ոչ թե միայն գլխից, ընդամենը «սկզբունք» չլինի:

Ուստի կյանքի հիմնական խնդիրը պետք է ավելի լայն լինի, քան անձնականը, չպետք է սահմանափակվի սեփական հաջողություններով ու անհաջողություններով: Մարդկանց նկատմամբ բարոյությունից, ընտանիքի, սեփական քաղաքի, ժողովրդի, երկրի, ամբողջ տիեզերքի նկատմամբ սիրուց պետք է թելադրվի:

Արդյո՞ք սա նշանակում է, որ մարդը պետք է ճգնավորի նման ապրի, հոգ չտանի իր մասին, ոչինչ ձեռք չբերի և չուրախանա պաշտոնի բարձրացումից: Ամենևին



ոչ: Իր մասին բոլորովին չմտածող մարդն անբնական և անձամբ ինձ ոչ հաճո երևույթ է. ինչ-որ ճեղքվածք կա, սեփական բարության, անշահախնդրության, կարևորության ցուցադրական գերազնահատում, դրա մեջ մնացած մարդկանց նկատմամբ մի տեսակ արհամարհանք, առանձնանալու ձգտում կա:

Այդ պատճառով միայն կյանքի գլխավոր խնդրի մասին եմ խոսում: Իսկ այդ գլխավոր խնդիրն ուրիշների աչքը խոթել պետք չէ: Պետք է և լավ հագնվես (դա հարգանք է մարդկանց նկատմամբ), բայց պարտադիր չէ «ուրիշներից լավ»: Եվ սեփական գրադարանը պետք է հավաքես, բայց պարտադիր չէ, որ հարևանի գրադարանից մեծ լինի: Եվ լավ կլինի, որ մեքենա ձեռք բերես քեզ և ընտանիքիդ համար. այդպես հարմար է: Միայն թե երկրորդականը պետք չէ առաջնային դարձնել, որ կյանքի գլխավոր խնդիրը քեզ չտանջի, երբ պետք չէ: Ուրիշ բան, եթե դա անհրաժեշտ է: Այդ դեպքում կերևա. թե ով ինչի է ընդունակ:

Իններորդ նակակ Ե՞րբ կարելի է վիրավորվել

Միայն այն ժամանակ կարելի է վիրավորվել, երբ ցանկանում են ձեզ վիավորել: Եթե չեն ցանկանում, իսկ նեղանալու առիթը պատահականություն է, այդ դեպքում ինչո՞ւ վիրավորվել:

Առանց զայրանալու թյուրիմացությունը պարզի՞ր և վերջ:

Դե, իսկ եթե ցանկանում են վիրավորե՞լ: Վիրավորանքին վիրավորանքով պատասխանելուց առաջ արժե մտածել՝ վիրավորանքի մակարդակին իջնելու հարկ կա՞: Չէ՞ որ վիրավորանքը շատ ստոր մի բան է, և դա վեր հանելու համար մինչև դա իջնել է պետք:

Իսկ եթե համենայն դեպս որոշել եք վիրավորվել, ապա նախօրոք մաթեմատիկական որոշ գործողություններ կատարեք՝ հանում, բաժանում և այլ: Ենթադրենք՝ ձեզ վիրավորել են մի բանի համար, ինչի համար դուք մասամբ եք մեղավոր: Ձեր վիրավորվածության զգացումից հանե՛ք այն ամենը, ինչը ձեզ չի վերաբերում: Ենթադրենք՝ ազնիվ մղումներից ելնելով են ձեզ վիրավորել, այդ դեպքում ձեր զգացումներն այն ազնիվ մղումներին բաժանե՛ք, որոնք վիրավորական դիտողություն են հարուցել: Մտքում անհրաժեշտ մաթեմատիկական գործողությունը կատարելով՝ կարող եք վիրավորանքին ավելի մեծ արժանապատվությամբ պատասխանել, որն այնքան ազնիվ կլինի, որքան քիչ նշանակություն կտաք վիրավորանքին: Իհարկե, մինչև որոշակի սահմանները:

Ընդհանրապես, չափազանց նեղացկոտությունը մտքի պակասության կամ բարդութավորվածության նշան է: Խելամի՛տ եղեք:



Անգլիական մի լավ կանոն կա՝ վիրավորվեք միայն այն ժամանակ, երբ ցանկանում են ձեզ վիրավորել, դիտավորյալ են նեղացնում: Սովորական անուշադրության, մոռացկոտության (երբեմն տվյալ անձին բնորոշ տարքի կամ հոգեկան թերության պատճառով) պատճառով վիրավորվել չի կարելի: Հակառակը, այդպիսի «մոռացկոտ» մարդու նկատմամբ հատուկ ուշադրություն ցուցաբերեք. դա ազնիվ ու գեղեցիկ կլինի:

Սա այն դեպքում, երբ ձեզ են «վիրավորում», իսկ ի՞նչ անենք այն դեպքում, երբ դուք կարող եք ուրիշին վիրավորել: Նեղացկոտ մարդկանց նկատմամբ պետք է հատուկ ուշադիր լինել: Ախր, նեղացկոտությունը բնավորություն շատ տանջող գիծ է:

Տասներորդ նամակ Պատիվ՝ իսկական և կեղծ

Սահմանումներ չեմ սիրում և հաճախ դրանց պատրաստ էլ չեմ: Բայց խղճի և պատվի միջև որոշակի տարբերություններ կարող եմ նշել:

Խղճի և պատվի միջև մի շատ էական տարբերություն կա: Խիղճը միշտ հոգու խորքից է բխում, և խղճով ինչ-որ չափով մաքրվում են: Խիղճը «տանջում է»: Խիղճը կեղծ չի լինում: Խիղճը կարող է ճնշված կամ չափազանցված (շատ հազվադեպ) լինել: Բայց պատվի մասին պատկերացումները կարող են շատ կեղծ լինել, և այդ կեղծ պատկերացումները հսկայական վնաս են հասցնում հասարակությանը:

Նկատի ունեմ այն, ինչն անվանում են «համազգեստի պատիվ»: Մեր հասարակությանը ոչ բնորոշ այնպիսի հասկացություն, ինչպիսին «ազնվականության պատիվն» է, մեզանում վերացել է, բայց «համազգեստի պատիվը» ծանր բեռի նման մնացել է: Նույնն է, թե մարդը մահացել է, և միայն համազգեստն է մնացել, որի վրայից շքանշանները հանել են: Եվ դրա մեջ այլևս խղճմտանքով սիրտ չի բաբախում:

«Համազգեստի պատիվը» ղեկավարներին ստիպում է կեղծ և արատավոր նախագծեր առաջ մղել, ակնհայտորեն չհաջողված կառույցներ շարունակելը պնդել, հուշարձանները պահպանող ընկերությունների հետ պայքարել («մեր շինարարությունն ավելի կարևոր է»), և այլն: «Համազգեստի պատիվը» պաշտպանելու նման օրինակներ շատ կարելի է բերել:

Իսկական պատիվը միշտ համահունչ է խղճի հետ: Համազգեստի պատիվը կեղծ է, անապատում ցնորքի նման՝ մարդկային (ավելի ճիշտ «չինովնիկական») հոգու բարոյական անապատում:

Տասնմեկերորդ նամակ



Կարիերիզմի մասին

Մարդն իր ծննդյան առաջին օրվանից զարգանում է: Նա միտված է դեպի ապագան: Նա սովորում է, նույնիսկ գլխի չընկնելով՝ վարժվում իր առջև նոր խնդիրներ դնելու: Եվ ի՞նչ արագ է նա կյանքում իր դիրքին տիրապետում: Արդեն և՛ գդալն է կարողանում բռնել, և՛ առաջին բառերն է արտասանում:

Հետո՝ դեռահաս ու պատանի, նա էլի սովորում է:

Հետո գալիս է գիտելիքները կիրառելու, ինչին ձգտում էիր, դրան հասնելու ժամանակը: Հասունությունը: Ներկայով պետք է ապրել... Բայց թափը պահպանվում է, և ահա, շատերի համար՝ սովորելու փոխարեն գալիս է կյանքում իր տեղը գրավելու ժամանակը: Շարժումն իներցիայով շարունակվում է: Մարդը միշտ միտված էր ապագային, իսկ ապագան արդեն ո՛չ իրական գիտելիքներն են, ո՛չ վարպետությունը, այլ կյանքում հարմար դիրք գրավելը: Բովանդակությունը, իսկական բովանդակությունը կորսված է: Ներկան չի հասնում, ապագայի դատարկ ձգտումն է դեռևս առկա: Հենց սա էլ կարիերիզմն է: Մարդուն անձնապես դժբախտ և շրջապատի համար անտանելի դարձնող ներքին անհանգստությունը:

Տասներկուերորդ նամակ Մարդը պետք է մտավորական լինի

Մարդը պե՛տք է մտավորական լինի: Իսկ եթե նրա մասնագիտությունը մտավորականություն չի պահանջո՞ւմ: Իսկ եթե կրթություն չի կարողացել ստանա՞լ. հանգամանքներն են այդպես դասավորվել: Իսկ եթե շրջապատը չի թույլատրո՞ւմ: Իսկ եթե մտավորականությունը նրան գործընկերների, ընկերների, բարեկամների շրջանում «սպիտակ ագռավ» կդարձնի, պարզապես ուրիշներին մոտանալուն կխանգարի՞:

Ո՛չ, ո՛չ և կրկին ոչ: Մտավորականությունը ցանկացած պարագայում է պետք: Այն և՛ շրջապատողների, և՛ հենց իր՝ մարդու համար է անհրաժեշտ:

Սա շատ, շատ կարևոր է, և հատկապես նրա համար, որ երջանիկ ու երկար, այո՛, երկար ապրեք: Քանի որ մտավորականությունը բարոյական առողջությանն է հավասարազոր, իսկ առողջությունը պետք է երկար ապրելու համար՝ ոչ միայն ֆիզիկական, այլ նաև մտավոր երկարակեցության: Մի հին գրքում ասված է. «Պատվիր քո հորը և քո մորը, և երկարակյաց կլինես երկրի վրա»: Սա վերաբերում է և՛ ամբողջ ժողովրդին, և՛ առանձին մարդուն: Իմաստուն խոսք է:

Բայց նախ որոշենք, թե ինչ է մտավորականությունը, իսկ հետո՝ ինչո՞ւ է կապված երկարակեցության պատգամի հետ:



Շատերը կարծում են, թե մտավորականը նա է, ով շատ է կարդացել, լավ կրթություն է ստացել (և նույնիսկ հիմնականում հումանիտար), շատ է ճանապարհորդել, մի քանի լեզու գիտե:

Այնուամենայնիվ կարելի է այս ամենն ունենալ ու մտավորական չլինել, և մեծ հաշվով դրանք չունենալ, սակայն ներքուստ մտավորական լինել:

Կրթվածությունը մտավորականության հետ շփոթել չի կարելի: Կրթվածությունն ապրում է հին բովանդակությամբ, իսկ մտավորականությունը՝ նորի ստեղծմամբ և հնի նորովի ըմբռնմամբ:

Ավելին... Իսկապես մտավորական մարդուն զրկեք իր բոլոր գիտելիքներից, կրթությունից, զրկեք հիշողությունից: Թող նա աշխարհում ամեն ինչ մոռացած լինի, գրականության դասականներին չիմանա, մշակութային գլուխգործոցները չհիշի, պատմական կարևորագույն դեպքերը մոռացած լինի, բայց այնուամենայնիվ պահպանի ինտելեկտուալ արժեքների նկատմամբ ընկալունակությունը, գիտելիքների ձեռքբերման նկատմամբ սերը, հետաքրքրությունը պատմության նկատմամբ, գեղագիտական զգացողությունը, արվեստի իսկական գործը միայն զարմացնելու համար արած կոպիտ «աճապարարությունից» կարողանա տարբերել, եթե բնության գեղեցկությամբ զմայլվել, ուրիշի բնավորությունը և անհատականությունը հասկանալ, նրա դրության մեջ մտնել, և ուրիշին հասկանալով՝ նրան օգնել կարողանա, կոպտություն, անտարբերություն, չարություն, նախանձ չցուցաբերի, այլ ուրիշին գնահատի ըստ արժանիքների, եթե անցյալի մշակույթի նկատմամբ հարգանք, դաստիարակված մարդու հմտություններ, բարոյական խնդիրներ լուծելիս պատասխանատվություն, սեփական լեզվի (գրավոր և բանավոր) ճշգրտություն և հարստություն ցուցաբերի, հենց նա էլ կլինի մտավորականը:

Մտավորականությունը ոչ միայն գիտելիքներով, այլ ուրիշին հասկանալու կարողությամբ է արտահայտվում: Այն հազար ու մի մանրուքում է արտահայտվում՝ հարգալից վիճելու, սեղանի շուրջը համեստ դրսևորվելու, ուրիշին աննկատ (հատկապես աննկատ) օգնելու, բնությունը պահպանելու, շրջապատը ծխախոտի մնացորդով կամ հայհոյանքով, վատ մտքերով (դա նույնպես աղբ է, այն էլ ինչպիսի) չկեղտոտելու կարողություններում:

Ռուսաստանի հյուսիսում գյուղացիների էի ճանաչում, ովքեր իսկապես մտավորական էին: Նրանք իրենց տներում զարմանալի մաքրություն էին պահապանում, կարողանում էին լավ երգերը գնահատել, «եղելություններ» (այսինքն՝ այն, ինչ պատահել էր իրենց կամ ուրիշների հետ) կարողանում էին պատմել, ապրում էին կարգավորված կենցաղով, հյուրասեր ու բարեհամբույր



էին, և՛ ուրիշի տխրությանը, և՛ ուրիշի ուրախությանը ըմբռնումով էին վերաբերվում:

Մտավորականությունը հասկանալու, ընկալելու կարողություն է, աշխարհի և ուրիշների նկատմամբ համբերատար վերաբերմունք:

Մտավորականությունը պետք է զարգացնել, մարզել. մարզել հոգեկան ուժերը, ինչպես ֆիզիկականն են մարզում: Իսկ մարզումը հնարավոր և անհրաժեշտ է ցանկացած պայմաններում:

Այն, որ ֆիզիկական ուժերի մարզումը նպաստում է երկարակեցությանը, հասկանալի է: Ավելի քիչ են հասկանում, որ երկարակեցության համար անհրաժեշտ է նաև հոգևոր և ոգեղեն ուժերի մարզումը:

Բանն այն է, որ շրջապատի նկատմամբ չարական ու չարամիտ վերաբերմունքը հոգևոր և ոգեղեն ուժերի թուլության, մարդկայնորեն ապրել չկարողանալու նշան է... Լիքը ավտորբուսում հրմշտվողը թույլ, նյարդային, տանջահար մարդ է՝ ամեն ինչին ոչ ճիշտ արձագանքող: Հարևանների հետ նույնպես վիճում է ապրել չկարողացող, հոգեպես խուլ մարդը: Գեղագիտորեն չդաստիարակված մարդն էլ դժբախտ է: Ուրիշին հասկանալ չկարողացողը, ուրիշին միայն չար մտադրություններ վերագրողը, ուրիշներից միշտ նեղացողը նույնպես իր կյանքն աղքատացնող և մյուսների ապրելուն խանգարող մարդ է: Հոգևոր թուլությունը ֆիզիկական թուլության է հանգեցնում: Ես բժիշկ չեմ, բայց համոզված եմ, որ այդպես է: Երկարամյա փորձն է ինձ համոզել:

Բարեհամբուրությունն ու բարությունը մարդուն ոչ միայն ֆիզիկապես առողջ, այլ նաև գեղեցիկ են դարձնում: Այո, հենց գեղեցիկ:

Չարությունից այլայլված մարդու դեմքն այլանդակվում է, իսկ չար մարդու շարժումները ոչ շինծու, այլ բնական (որ շատ ավելի արժեքավոր է) նրբագեղությունից զուրկ են:

Մարդու հասարակական պարտքը մտավորական լինելն է: Դա յուրաքանչյուրի պարտքն է հենց իր առաջ: Դա նրա անձնական երջանկության, իր շուրջն ու իր նկատմամբ «բարյացակամության աուրայի» գրավական է:

Ամենը, ինչի մասին այս գրքում երիտասարդ ընթերցողների հետ զրուցում եմ, մտավորականության, ֆիզիկական և հոգևոր առողջության, առողջության գեղեցկության կոչ է: Որպես մարդ և ժողովուրդ՝ երկարակյաց լինենք: Հորը և մորը պատվելն էլ պետք է ավելի լայն իմաստով հասկանալ՝ որպես անցյալում մեր ունեցած ամեն լավի պատվում, անցյալի, որը մեր ժամանակների, վեհ ժամանակների հայրն ու մայրն է, որում ապրելու մեծ երջանկությունն ունենք:



Տասներեքերորդ նամակ Դաստիարակվածության մասին

Մարդը լավ դաստիարակություն կարող է ստանալ ոչ միայն ընտանիքից կամ դպրոցից, այլ նաև... հենց ինքն իրենից:

Միայն պետք է իմանալ, թե որն է լավ դաստիարակությունը:

Չեմ պատրաստվում դաստիարակվածության պատրաստի «դեղատոմսեր» առաջարկել, քանի որ ինքս ինձ օրինակելի դաստիարակված չեմ համարում: Բայց որոշ մտքեր կցանկանայի հաղորդել ընթերցողին:

Հավատացած եմ, օրինակ, որ իսկական դաստիարակվածությունը նախ և առաջ սեփական տանը, սեփական ընտանիքում, հարազատների հետ հարաբերությունների մեջ է դրսևորվում:

Եթե տղամարդը փողոցում (նույնիսկ ավտոբոսում) անձանոթ կնոջը զիջում է ճանապարհը և նրա առջև դուռ է բացում, իսկ տանը հոգնած կնոջը չի օգնում ափսեները լվանալիս, ապա նա չդաստիարակված մարդ է:

Եթե ծանոթների նկատմամբ բարեհամբույր է, իսկ տնեցիների հետ բորբոքվում է ամեն մանրուքից, ապա չդաստիարակված մարդ է:

Եթե մարդ իր մտերիմների բնավորությունը, հոգեբանությունը, սովորույթները և ցանկությունները հաշվի չի առնում, ապա չդաստիարակված է: Եթե արդեն հասուն տարիքում մարդն ընդունում է ծնողների օգնությունը և չի նկատում, որ նրանք իրենք օգնության կարիք ունեն, չդաստիարակված է:

Եթե մարդը ռադիոյի կամ հեռուստացույցի ձայնը բարձրացնում կամ բարձրաձայն խոսում է, երբ տանեցիներից մեկը (եթե նույնիսկ տան փոքրիկներից է) դաս է սովորում կամ կարդում է, ապա նա չդաստիարակված է:

Եթե մարդը սիրում է ծաղրել (ձեռք առնել) կնոջը կամ երեխաներին՝ չխնայելով նրանց ինքնասիրությունը, հատկապես ուրիշների ներկայությամբ, ապա նա (ներողություն եմ խնդրում) ուղղակի հիմար է:

Դաստիարակված մարդը նա է, ով ցանկանում և կարողանում է հաշվի առնել մյուսներին, նա է, ում համար իր քաղաքավարի լինելը ոչ միայն սովորական ու հեշտ է, այլ նաև՝ հաճելի: Նա է, ով հավասարապես քաղաքավարի է և՛ մեծերի, և՛ փոքրերի հետ (տարիքով և դիրքով):



Դաստիարակված մարդը «բարձրաձայն» չի դրսևորվում, խնայում է ուրիշի ժամանակը (ասացվածքն ասում է. «Ճշգրտությունը թագավորների քաղաքավարությունն է»), հստակորեն կատարում է ուրիշներին տված խոստումները, իրեն չի կարևորում, «քիթը չի տնկում» և միշտ նույնն է՝ տանը, դպրոցում, ինստիտուտում, աշխատանքի վայրում, խանութում, ավտոբուսում:

Հավանաբար ընթերցողը նկատեց, որ հիմնականում դիմում եմ տղամարդկանց՝ ընտանիքի ղեկավարներին: Դա այն պատճառով, որ կնոջը ընդհանրապես պետք է զիջել ճանապարհը... և ոչ միայն մտնելիս:

Սակայն խելացի կինն արագ կհասկանա, թե հատկապես ինչ պետք է անի, որ միշտ և երախտագիտությամբ տղամարդուց ընդունելով բնությունից իրեն տրված իրավունքը՝ ինչքան հնարավոր է քիչ ստիպի տղամարդուն, որ ճանապարհը զիջի: Իսկ դա շատ ավելի դժվար է: Այդ պատճառով էլ բնությունը հոգ է տարել, որ կանայք հիմնականում (չհաշված որոշ բացառություններ) օժտված լինեն տակտի ավելի մեծ զգացումով և բնատուր քաղաքավարությամբ, քան տղամարդիկ:

Շատ գրքեր կան «լավ վարք ու բարքի» մասին: Այդ գրքերը բացատրում են, թե մարդ իրեն ինչպես դրսևորի հասարակության մեջ, հյուր գնալիս և տանը, թատրոնում, աշխատավայրում, մեծերի ու փոքրերի հետ, ինչպես խոսի՝ առանց ուրիշի լսողությունը վիրավորելու, ինչպես հագնվի՝ առանց վիրավորելու ուրիշի տեսողությունը:

Բայց, ցավոք, մարդիկ շատ քիչ օգուտ են ստանում այդ գրքերից: Իմ կարծիքով, այդպես է լինում, քանի որ այդ գրքերում հազվադեպ է բացատրվում, թե ինչի համար է լավ վարվեցողությունը: Թվում է, թե լավ վարվելաձև ունենալը կեղծ է, ծանծաղի, ոչ պետքական: Լավ վարվելաձևով մարդն իրականում իր վատ արարքները կարող է թաքցնել:

Այո, լավ վարվելաձևը կարող է միայն արտաքին լինել, բայց ընդհանուր առմամբ լավ վարվելաձևը շատ սերունդների փորձով է ստեղծվել և մարդկանց՝ ավելի լավը լինելու, ավելի հարմար ու գեղեցիկ ապրելու բազմադարյան փորձն իմաստավորում է:

Ո՞րն է խնդիրը: Ի՞նչն է ընկած լավ վարվելաձև սովորեցնող ուղեցույցի հիմքում: Արդյո՞ք դա վարքի դժվար հիշվող կանոնների, «դեղատոմսերի», հանձնարարությունների հասարակ ժողովածու է: Լավ վարվելաձևի հիմքում հոգատարությունն է՝ հոգատարություն, որ մարդ ուրիշին չխանգարի, որ բոլորը միասին իրենց լավ զգան: Պետք է մեկ մեկու չխանգարել կարողանանք: Այդ պատճառով չի կարելի աղմկել: Աղմուկից պաշտպանվելու համար ականջներդ չես փակի, և դժվար թե դա միշտ հնարավոր լինի: Օրինակ՝ սեղանի մոտ՝ ճաշի



Ժամանակ: Այդ պատճառով պետք չէ ճպճպացնել, պատառաքաղն աղմուկով դնել ափսեի մեջ, ֆոթացնել արգանակը, բարձրաձայն խոսել ճաշի ժամանակ կամ լիքը բերանով խոսել, որպեսզի հարևաններին չանհանգստացնես: Արմունկերը սեղանին պետք չէ դնել նորից ուրիշներին չխանգարելու համար: Խնամքով հագնվելը պետք է, քանի որ դրանով հարգանք եք արտահայտում ուրիշների նկատմամբ՝ հյուրերի, տանտերերի կամ ուղղակի անցորդների. ձեզ նայելը պետք է զզվանք չառաջացնի: Հարևաններին անընդհատ կատակներով, սրամտություններով ու անեկդոտներով պետք չէ հոգնեցնել, հատկապես եթե մասնակիցներից մեկն արդեն դրանք պատմել է: Դրանով ունկնդիրներին անհարմար վիճակի մեջ եք դնում: Ջանացեք, որ ոչ միայն զբաղեցնեք ուրիշներին, այլ նաև նրանց խոսելու հնարավորություն տաք: Մարդու շարժումները, հագուստը, քայլվածքը, ամբողջ պահվածքը պետք է զուսպ լինի և... գեղեցիկ: Քանի որ գեղեցկությունը երբեք չի հոգնեցնում: Գեղեցկությունը «հասարակական» է: Եվ այսպես կոչված լավ վարքագծում միշտ խորը իմաստ կա:

Մի կարծեք, որ լավ վարվելաձևը միայն վարվելաձև է, այսինքն՝ մակերեսային մի բան: Ձեր վարքով բացահայտում եք ձեր բնույթը: Մարդը ոչ այնքան իր վարվելաձևը պետք է մշակի, որքան այն, ինչն արտահատվում է վարվելաձևով՝ խնայող վերաբերմունք աշխարհի նկատմամբ՝ հասարակության, կենդանիների ու թռչունների, բուսականության, շրջապատի գեղեցկության, այն տեղի անցյալի, որտեղ ապրում է, և այլն: Պետք է ոչ թե հարյուրավոր կանոններ հիշել, այլ միայն մեկը՝ ուրիշի նկատմամբ հարգալից վերաբերմունքի անհրաժեշտությունը: Եթե դա լինի և մի քիչ էլ հնարամտություն, ապա վարվելաձևն ինքն իրեն կհայտնվի, ավելի ճիշտ՝ կհիշեք լավ վարվելաձևի կանոնները և դրանք կիրառելու ցանկություն ու կարողություն կունենաք:

Տասնչորսերորդ նամակ Վաստ և լավ ազդեցությունների մասին

Յուրաքանչյուր մարդու կյանքում հետաքրքիր տարիքային մի երևույթ կա՝ կողմնակի ազդեցությունը: Այդ կողմնակի ազդեցությունները սովորաբար չափազանց ուժեղ են լինում, երբ պատանին կամ աղջիկը սկսում են չափահաս դառնալ՝ բեկման շրջանում: Հետո այդ ազդեցությունների ուժն անցնում է: Բայց պատանիներն ու աղջիկները միշտ պետք է հիշեն ազդեցությունների, դրանց «շեղումների» և երբեմն նորմալ ընթացքի մասին:

Գուցե այստեղ ոչ մի շեղում էլ չկա. ուղղակի աճող մարդը՝ աղջիկը կամ պատանին, ցանկանում է արագ մեծանալ, ինքնուրույն դառնալ: Բայց ինքնուրույն դառնալով՝ նրանք ամենից առաջ ընտանիքի ազդեցությունից են ձգտում ազատվել: Իրենց «երեխայության» մասին պատկերացումները սեփական ընտանիքի հետ են կապվում: Այդտեղ մասամբ էլ ընտանիքն է մեղավոր լինում, որը չի նկատում, որ իր «երեխան» եթե նույնիսկ չի դարձել, ապա ցանկանում է հասուն լինել: Բայց



լսող լինելու սովորությունը դեռ անցած չի լինում, և նա «լսում» է նրան, ով իրեն հասուն է համարում. հաճախ այդ մարդն ինքը դեռ հասուն և իսկապես ինքնություն չի լինում:

Ազդեցությունները լինում են և՛ լավ, և՛ վատ: Դա հիշե՛ք: Բայց վատ ազդեցություններից պետք է զգուշանալ: Քանի որ կամք ունեցող մարդը չի տրվում վատ ազդեցությունների, ինքն է իր ճանապարհին ընտրում: Իսկ կամազուրկ մարդը տրվում է վատ ազդեցությունների: Վախեցե՛ք չգիտակցված ազդեցություններից, հատկապես քանի դեռ հստակ չեք կարող տարբերել լավը վատից, եթե ձեզ դուր է գալիս ընկերների գովասանքը և քաջալերանքը. թող անպայման լինեն այդ գովասանքն ու քաջալերանքը, ինչպիսին էլ լինեն:

Տասնհինգերորդ նամակ Նախանձի մասին

Երբ ծանրամարտիկը համաշխարհային ռեկորդ է սահմանում, նրան նախանձո՞ւմ եք: Իսկ մարմնամարզուի՞ն: Իսկ եթե ռեկորդակիրը ջրացատկո՞րդ է:

Սկսեք թվարկել այն ամենը, ինչ գիտեք, և ինչին կարելի է նախանձել. կնկատեք, որ ինչքան մոտ է ձեր աշխատանքին, մասնագիտությանը, կյանքին, այնքան զգալի է նախանձի մոտիկությունը: Մանկական խաղի նման է շատ՝ ցուրտ է, մի քիչ տաք է, ավելի տաք է, կվառվես:

Կապված աչքերով վերջին քայլում գտնում եք ուրիշի թաքցրած առարկան: Հենց այդպես էլ նախանձն է: Ինչքան ուրիշի հաջողությունը ձեր մասնագիտությանը, ձեր հետաքրքրություններին մոտ է, այնքան մեծանում է նախանձի այրող վտանգը:

Սարսափելի զգացողություն է, որից առաջին հերթին հենց նախանձողն է տուժում:

Հիմա կհասկանաք, թե նախանձի այդ հիվանդագին զգացողությունից ինչպե՛ս ազատվեք. ձեր մեջ սեփական անհատական հակումները, ձեզ շրջապատող աշխարհում ձեր անձնական անկրկնելիությունը զարգացրեք, ինքներդ դուք եղեք, և երբեք չեք նախանձի: Նախանձը նախ և առաջ այնտեղ է ծավալվում, որտեղ ինքներդ ձեզ օտար եք: Նախանձը նախ և առաջ այնտեղ է զարգանում, որտեղ դուք ձեզ մյուսներից չեք տարբերում: Նախանձում եք, որեմն դեռ ձեզ չեք գտել:

Տասնվեցերորդ նամակ Ազահության մասին

«Ազահություն» բառի բառարանային սահմանումներն ինձ չեն բավարարում: «Ինչ-որ բանի չափազանց մեծ, անկուշտ ցանկությունը բավարարելու ձգտում» կամ «կծծիություն, շահամոլություն» (սա ռուսաց լեզվի լավագույն բառարաններից մեկից



Է՝ քառահատորից, որի առաջին հատորը 1957թ. է լույս տեսել): Քառահատոր բառարանի այս սահմանումը սկզբունքորեն ճիշտ է, բայց չի փոխանցում զգվանքի այն զգացումը, որն ինձ համակում է, երբ հանդիպում եմ մարդու ազահության դրսևորմանը: Ազահությունը սեփական արժանապատվությունը մոռանալն է, նյութական հետաքրքրությունները սեփական անձից վեր դասելու փորձ, հոգեկան շեղվածություն, միտքը չափազանց սահմանափակող սարսափելի ուղղվածություն, մտքի մթագնում, խեղճություն, հիվանդագին հայացք աշխարհին, իր և ուրիշների նկատմամբ մաղձոտություն, ընկերության մոռացություն: Ազահությունը մարդու մեջ նույնիսկ ծիծաղելի չէ, նվաստացուցիչ է: Այն թշնամական է սեփական անձի և շրջապատի նկատմամբ: Խելամիտ խնայողությունն այլ բան է. ազահությունը դրա այլասերումն է, հիվանդությունը: Խնայողությանը միտքը տիրում է, իսկ ազահությունը զավթում է միտքը:

Տասնյոթերորդ նամակ Արժանապատվորեն վիճել կարողանալու մասին

Կյանքում վիճելու, հակաճառելու, ուրիշների կարծիքը հերքելու, չհամաձայնելու առիթ շատ է լինում:

Մարդն իր դաստիարակվածությունն ամենաշատը ցուցաբերում է, երբ բանավիճում, վիճում, իր սկզբունքներն է պաշտպանում:

Վեճի ժամանակ անմիջապես բացահայտվում են մարդու մտավորականությունը, մտքի տրամաբանականությունը, քաղաքավարությունը, ուրշներին հարգելու կարողությունը և ... ինքնահարգանքը:

Եթե վեճի ընթացքում մարդ ավելի շատ ոչ թե ճշմարտության, այլ հակառակորդի նկատմամբ հաղթանակ տանելու մասին է մտածում, հակառակորդին լսել չի կարողանում, ձգտում է նրանից ավելի բարձր գոռալ, մեղադրանքներով վախեցնել, ապա այդ մարդը դատարկ մարդ է, և նրա վեճն էլ դատարկ է:

Իսկ խելացի և քաղաքավարի մարդը վեճն ինչպե՞ս է վարում:

Ամենից առաջ նա ուշադիր լսում է իր հակառակորդին՝ այն մարդուն, ով իր կարծիքի հետ համաձայն չէ: Ավելին, եթե հակառակորդի դիրքորոշման մեջ ինչ-որ բան իրեն հասկանալի չէ, լրացուցիչ հարցեր է տալիս: Եվ հետո, եթե նույնիսկ հակառակորդի բոլոր պնդումները հասկանալի են, նա ընտրում է այդ պնդումների ամենաթույլ կետերը և ճշտում, թե հակառակորդը հենց դա՞ նկատի ունի:

Հակառակորդին ուշադիր լսելով և լրացուցիչ հարցեր տալով՝ վիճողը երեք նպատակի է հասնում. 1) հակառակորդը չի կարող առարկել, որ իրեն «ճիշտ



չեն հասկացել», կամ ինքը «դա չէր պնդում », 2) հակառակորդի կարծիքի նկատմամբ իր ուշադիր վերաբերմունքով վեճին հետևողների համակրանքն է վաստակում, 3) իր հակառակորդին լսելով և հարցեր տալով՝ ժամանակ է շահում, որպեսզի ավելի լավ կշռադատի իր փաստարկները (իսկ դա պակաս կարևոր չէ), ճշգրտի իր դիրքորոշումը վեճի ժամանակ:

Հետագայում, առարկելիս, վեճի անթույլատրելի հնարքներին երբեք չի կարելի դիմել, և պետք է պահապանել հետևյալ կանոնները՝ 1) առարկել, բայց չմեղադրել, 2) «սիրտը չկարդալ», հակառակորդի համոզմունքների շարժառիթների մեջ թափանցել չփորձել («դուք այս տեսակետն եք պաշտպանում, որովհետև այն ձեզ համար շահեկան է», «այդպես եք խոսում, որովհետև ինքներդ այդպիսին եք» և այլն), 3) վեճի թեմայից չշեղվել. վեճը մինչև վերջ հասցնել պետք է կարողանալ, այսինքն՝ կա՛մ հակառակորդի թեզը հերքել, կա՛մ ընդունել, որ հակառակորդն է ճիշտ:

Իմ վերջին պնդման մասին ուզում եմ հատուկ խոսել:

Եթե հեց սկզբից վեճը քաղաքավարի և հանգիստ եք վարում, առանց գոռոզության, ապա դրանով ապահովում եք արժանապատվորեն հանգիստ նահանջ:

Հիշեք, վեճի ժամանակ ավելի սիրուն բան չկա, քան անհրաժեշտության դեպքում հակառակորդի մասնակի կամ լրիվ ճիշտ լինելը հանգիստ ընդունելը: Դրանով շրջապատի հարգանքն եք շահում: Դրանով կարծես զիջելու կոչ եք անում հակառակորդին, ստիպում մեղմել իր դիրքորոշման ծայրահեղությունները:

Իհարկե, միայն այն դեպքում կարելի է հակառակորդի ճիշտ լինելն ընդունել, եթե հարցը ձեր ընդհանուր համոզմունքներին, ձեր բարոյական սկզբունքներին չի վերաբերում (դրանք միշտ պետք է ամենաբարձրը լինեն):

Մարդը պիտի հողմացույց չլինի, միայն նրան դուր գալու համար կամ, Աստված չանի, վախից, կարիերիստական մղումներից ելնելով և այլն, հակառակորդին չպետք է զիջի:

Արժանապատվորեն զիջել այն հարցում, որը ձեր ընդհանուր համոզմունքներից (հուսով եմ, բարձր) հրաժարվել չի ստիպում, կամ արժանապատվորեն ընդունել հաղթանակը, առանց պարտվողին չարախնդելու, առանց հաղթանակ տոնելու, առանց հակառակորդի ինքնասիրությունը վիրավորելու. սա ինչքա՛ն գեղեցիկ է:

Մտավոր ամենամեծ հաճույքներից մեկն այն է, որ խելացի և հմուտ վիճողների վարած վեճի ես հետևում:

Վեճի մեջ ավելի հիմար բան չկա, քան առանց փաստարկների վիճելը: Հիշեք



Գոգոլի «Մեռած հոգիներում» երկու տիկիների զրույցը.

- Սիրելիս, սա խայտաբղետ է:
- Ախ, չէ, խայտաբղետ չէ:
- Վա՛յ, իս այտաբղետ է:

Երբ վիճողը փաստարկներ չունի, ուղղակի «կարծիքներ» են հայտնվում:

Տասնութերորդ նամակ Սխալվելու արվեստը

Հեռուստատեսային հաղորդումներ դիտել չեմ սիրում: Բայց կային հաղորդումներ՝ պարերը սառույցի վրա, որ միշտ դիտում էի: Հետո դրանցից հոգնեցի և դադարեցի դիտելուց. դադարեցի պարբերաբար դիտելուց, սակայն երբեմն նայում եմ: Ինձ ամենաշատը դուր է գալիս, երբ հաջող են հանդես գալիս նրանք, ում թույլ են համարում, կամ ովքեր «անվանիների» ցանկում դեռ չեն հայտնվել: Սկսնակների հաջողությունը կամ անհաջողակների հաջողությունն ավելի մեծ բավականություն է պատճառում, քան հաջողակների հաջողությունը:

Հարցը դա չէ: Ամենից շատ ինձ հիացնում է, թե ինչպես է «չմշկորդը» (ինում սառույցի վրա հանդես եկող մարզիկներին այդպես էին անվանում) պարի ընթացքում ուղղում իր սխալը: Ընկավ թե չէ՝ վեր է կենում, մտնում պարի մեջ, վարում այդ պարն այնպես, կարծես անկում չի էլ եղել: Դա արվեստ է, մեծ արվեստ:

Բայց չէ՞ որ կյանքում սխալներն անհամեմատ ավելի շատ են լինում, քան սառցադաշտում: Եվ պետք է սխալից դուրս գալ կարողանալ. սխալներն ուղղել անմիջապես ու ... սիրուն: Այո, հատկապես սիրուն:

Երբ մարդը համառորեն պնդում է իր սխալը կամ էլ չափազանց շատ է զղջում, կարծես թե կյանքն ավարտվել է, «ամեն ինչ կորած» է, շատ տհաճ է և՛ իր, և՛ շրջապատի համար: Շրջապատողներն անհարմար են զգում ոչ թե բուն սխալի, այլ այն պատճառով, թե դա ուղղելիս սխալվողն ինչ անկարողություն է ցուցաբերում:

Սեփական սխալը ինքն իրեն խոստովանելը (պարտադիր չէ դա հրապարակայնորեն անել. դա կա՛մ ամոթ է, կա՛մ սեթևեթանք) միշտ չէ, որ հեշտ է, փորձ է պետք: Կատարված սխալից հետո հնարավորին չափ շուտ և հեշտ գործի մեջ մտնելու, այն շարունակելու համար պետք է փորձ ունենալ: Եվ պետք չէ, որ շրջապատողները մարդուն ստիպեն սխալն ընդունել, նրան սխալն ուղղելու պետք է մղել՝ արձագանքելով այնպես, ինչպես հանդիսատեսն է արձագանքում մրցումների ժամանակ. հարմար պահին նույնիսկ ընկածին ու սխալը հեշտությամբ ուղղածին



երբեմն բուռն ծափահարություններով պարզևատրելով:

Տասնիններորդ նամակ Ինչպե՞ս խոսել

Հագուստի փնթիությունը նախ և առաջ անհարգալից վերաբերմունք է շրջապատի և հենց սեփական անձի նկատմամբ: Հարցն այն չէ, որ պճնամուլի նման հագնված լինես: Հնարավոր է, որ պճնամուլության մեջ սեփական պերճաշուքության մասին չափազանցված պատկերացում կա, և, մեծ հաշվով, պճնանքը շատ մոտ է ծիծաղելիին: Պետք է մաքուր և կոկիկ հագնվեք, և այն ոճով, որն ամենից շատ է ձեզ սազում ու պատշաճ է ձեր տարիքին: Սպորտային հագուստը ծերուկին մարզիկ չի դարձնի, եթե նա չի պարապում: «Պրոֆեսորական» գլխարկը և պաշտոնական սև պիջակը հնարավոր չէ լողափում կամ սունկ հավաքելիս հագնել:

Իսկ ինչպե՞ս գնահատենք վերաբերմունքը լեզվի նկատմամբ, որով խոսում ենք: Լեզուն առավել, քան հագուստը, վկայում է մարդու ճաշակի, շրջապատի և հենց իր նկատմամբ նրա վերաբերմունքի մասին:

Մարդու լեզվում տարբեր տիպի փնթիություններ կան:

Եթե մարդը ծնվել ու ապրում է քաղաքից հեռու և խոսում է իր բարբառով, այդտեղ ոչ մի փնթիություն էլ չկա: Չգիտեմ՝ ուրիշներն ինչ կարծիքի են, բայց ինձ այդ բարբառները, եթե լավ պահպանված են, դուր են գալիս: Դրանց երգեցիկությունն է դուր գալիս, տեղական բառերը, տեղական արտահայտություններն են դուր գալիս: Բարբառները հաճախ ռուսաց գրական լեզվի հարստացման անսպառ աղբյուրներն են դառնում: Մի գրույցի ժամանակ գրող Ֆյոդոր Ալեքսանդրովիչ Աբրամովն ասել է. «Պետերբուրգի կառուցման համար ռուսական հյուսիսից գրանիտ են տեղափոխել և բիլինաների, ծիսերգերի, քնարական երգերի բառ առ բառ կապակցված քարեղեն կառույցների տեսքով տեղափոխել են խոսքը... Բիլինաների լեզուն «ուղղել»՝ ռուսաց գրական լեզվի նորմերին համապատասխանեցնել՝ կնշանակի փչացնել բիլինաները:

Այլ բան է, երբ մարդը երկար ժամանակ ապրում է քաղաքում, գիտի գրական լեզվի նորմերը, բայց գյուղական ձևերն ու բառերն է պահպանում: Դա կարող է լինել այն պատճառով, որ դրանք գեղեցիկ է համարում և դրանցով հպարտանում է: Ինձ համար դա տհաճ չէ: Թող ինչքան ցանկանում է «օ»-ով խոսի, պահպանի սովորական երգեցիկությունը: Դա սեփական հայրենիքով՝ գյուղով, հպարտության արտահայտություն էմ համարում: Դա վատ չէ, և դա մարդուն չի նսեմացնում: Դա նույնքան գեղեցիկ է, որքան հիմա մոռացված շեղօձիք վերնաշապիկը, սակայն միայն այն մարդու հագին, ով մանկուց է հագել և դրան սովոր է: Իսկ եթե մարդը դա հագել է միայն թիթիզանալու, ցույց տալու համար, որ ինքը «իսկական



գյուղացի» է, ապա դա և՛ ծիծաղելի, և՛ ցինիկ է. «Տեսե՛ք, թե ես ինչպիսին եմ. թքած ունենամ, որ քաղաքում եմ ապրում: Ցանկանում եմ բոլորիցդ տարբեր լինել»:

Խոսքի կոպտությամբ արժրանալը, ինչպես շարժումների կոպտությամբ, հագուստի փոփոխությամբ անտեղի խիզախելը, շատ տարծված երևույթ է և հիմնականում խոսում է մարդու հոգեբանական անպաշտպանվածության, նրա թուլության, բոլորովին էլ ոչ ուժի մասին: Խոսողը ձգտում է կոպիտ կատակով, կտրուկ արտահայտությամբ, ծաղրանքով, ցինիկությամբ իր վախի զգացողությունը, երկյուղը, երբեմն նաև անհանգստությունը ճնշել: Հատկապես կամքից թույլ աշակերտներն են, ուսուցիչներին կոպիտ մականուններ տալով, փորձում ցույց տալ, որ իրենք չեն վախենում: Դա կիսագիտակցական մակարդակում է լինում: Էլ չեմ խոսում այն մասին, որ դա անդաստիարակության, ոչ մտավորականության, երբեմն նաև դաժանության նշան է: Բայց նույն պատճառն է նաև ամենօրյա կյանքի երևույթների վերաբերյալ ցանկացած կոպիտ, ցինիկ, հանդգնորեն ծաղրական արտահայտությունների հիմքում, որոնք խոսողին ինչ-որ բանով վիրավորում են: Դրանով կոպիտ խոսող մարդիկ, կարծես, ցանկանում են ցուցադրել, որ իրենք բարձր են այն երևույթներից, որոնցից իրենք վախենում են: Ցանկացած ժարգոնային, ցինիկ արտահայտության, հայիոյանքի հիմքում թուլությունն է:

«Բառերով թքոտող» մարդիկ կյանքի՝ իրենց վիրավորող երևույթների նկատմամբ արհամարհանք են ցուցաբերում, քանի որ դրանք իրենց անհանգստացնում են, տանջում, հուզում, քանի որ իրենց թույլ, այդ երևույթներից անպաշտպան են զգում:

Իսկապես առողջ և ուժեղ, հավասարակշռված մարդն առանց անհրաժեշտության բարձր չի խոսի, չի հայիոյի և ժարգոնային բառեր չի գործածի: Չէ՞ որ վիստահ է, որ իր խոսքը առանց դրա էլ արժեքավոր է¹:

Մեր լեզուն մեր ընդհանուր ամենօրյա կյանքի կարևորագույն մասն է: Եվ ըստ նրա, թե մարդն ինչպես է խոսում, արագ ու հեշտ կարող ենք դատել, թե ում հետ գործ ունենք. կարող ենք որոշել մարդու մտավորականության աստիճանը, նրա հոգեբանական հավասարակշռվածության աստիճանը, նրա հնարավոր «բարդութալորվածության» աստիճանը (որոշ թույլ մարդկանց հոգեբանության մեջ այդպիսի տխուր երևույթ կա, բայց ես հիմա դա բացատրելու հնարավորություն չունեմ, դա հատուկ և լուրջ հարց է):

Լավ, հանդարտ, կիրթ խոսքը երկար և ուշիուշով սովորել է պետք՝ ունկնդրելով, մտապահելով, նկատելով, կարդալով և ուսումնասիրելով: Չնայած դժվար է, բայց դա

¹ Լեզվական կոպտության հոգեբանական խնդրին կարող եք ծանոթանալ «Ժամանակակից ռուսաց լեզվի ուղղագրության, բառապաշարի զարգացումը» գրքում՝ «Ժարգոնային բառերը մասնագիտական խոսքում» իմ աշխատանքում, Մոսկվա, 1994, էջ 311-359 (Դ. Լ.):



պետք է. պե՛տք է: Մեր խոսքը ոչ միայն մեր առօրյայի կարևոր մասն է (ինչպես արդեն նշել եմ), այլև մեր անհատականության, մեր հոգու, մտքի, միջավայրի ազդեցությանը, եթե նա «ձգում» է, չտրվելու մեր կարողության:

Քսաներորդ նամակ Ինչպե՛ս ելույթ ունենալ

Մեր կյանքում հիմա սովորական են հասարակական բանավոր ելույթները: Ամեն մարդ պետք է կարողանա ժողովի ժամանակ ելույթ ունենալ, գուցե նաև դասախոսություններով ու զեկուցումներով հանդես գալ:

Դարերի ընթացքում հազարավոր գրքեր են գրվել հռետորների և դասախոսների արվեստի մասին: Այստեղ չարժե կրկնել այն ամենը, ինչ հայտնի է հռետորական արվեստի մասին: Ասեմ միայն մի բան, ամենահասարակ բանը՝ որպեսզի ելույթը հետաքրքիր լինի, հենց ելույթ ունեցողին պիտի հետաքրքիր լինի ելույթ ունենալը: Նրան պետք է հետաքրքիր լինի սեփական տեսակետը շարադրելը, մյուսներին համոզելը, դասախոսության նյութը նրա համար գրավիչ պիտի լինի, նույնիսկ մի քիչ զարմանալի: Ելույթ ունեցողն ինքը պիտի իր զեկույցի առարկայով հետաքրքրված լինի և այդ հետաքրքրությունը լսողներին փոխանցել կարողանա: Նրանց ստիպի, որ զգան ելույթ ունեցողի հետաքրքրվածությունը: Միայն այդ դեպքում նրան լսելը հետքերի կլինի:

Մի բան էլ՝ ելույթում մի քանի հավասարազոր միտք կամ գաղափար չպիտի լինի: Ամեն մի ելույթում պետք է մի գլխավոր գաղափար, մի միտք լինի, որին ենթակա է մնացածը: Այդ դեպքում ելույթը ոչ միայն կհետաքրքրի, այլև կհիշվի: Իսկ էականն այն է, որ միշտ բարի տեսանկյունից խոսեք: Նույնիսկ ինչ-որ գաղափարի կամ մտքի դեմ ելույթը փորձեք կառուցել ի պաշտպանություն այն դրականի, որ ձեզ հետ վիճողի առարկություններում առկա է: Հասարակական ելույթը միշտ պետք է հասարակական տեսակետից լինի: Այդ դեպքում համակրանքի կարժանանա:

Քսանմեկերորդ նամակ Ինչպե՛ս գրել

Յուրաքանչյուր մարդ պետք է նույնքան լավ գրի, որքան և լավ խոսի: Մարդու գրավոր կամ բանավոր խոսքը նրան ավելի շատ է բնութագրում, քան նույնիսկ արտաքինը կամ վարվեցողությունը: Խոսքում դրսևորվում է մարդու մտավորականությունը, ճիշտ և ճշգրիտ մտածելու նրա կարողությունը, նրա հարգանքը ուրիշների նկատմամբ, նրա «խնամքտությունը»՝ բառի լայն իմաստով:

Հիմա կխոսենք միայն գրավոր լեզվի մասին, գլխավորապես գրավոր խոսքի այն



ձևի, որին ես սովոր եմ, այսինքն՝ գիտական (հիմնականում գրականագիտական) աշխատանքի լեզվի և ընթերցողների լայն խավի համար ամսագրային հոդվածների լեզվի մասին:

Նախ՝ մի ընդհանուր դիտարկում: Հեծանիվ քշել սովորելու համար պետք է հեծանիվ **քշել**: Գրել սովորելու համար, պետք է **գրել**: Չի կարելի ինչպես գրելու մասին շատ խորհուրդներ հավաքել և միանգամից սկսել ճիշտ ու լավ գրելը. չի ստացվի: Դրա համար ձեր ընկերներին նամակներ գրեք, օրագիր պահեք, հուշեր գրեք (հուշ կարելի է և պետք է ինչքան հնարավոր է շուտ գրել. վատ չէր լինի նույնիսկ պատանեկության տարիներին, օրինակ՝ մանկության մասին):

Մեզանում հաճախ են խոսում այն մասին, որ գիտական աշխատանքները և դասագրքերը «չոր» լեզվով են գրվում, լցվում գրասենյակային դարձվածներով: Այս առումով ամենաշատը պատմական և գրականագիտական աշխատանքներին է «հասնում»: Եվ մեծ մասամբ այդ հանդիմանությունները տեղին են: Ճիշտ են, բայց այնքան էլ ճշգրիտ չեն: Պետք է լավ գրել, և պետք չէ վատ գրել: Սա ոչ մեկը չի հերքում, և դժվար թե հակառակ տեսակետն արտահայտող մարդ լինի: Իսկ թե որն է «լավ լեզուն», և ինչպես կարելի է լավ գրելու հմտություններ ունենալ՝ այդ մասին մեզ մոտ քիչ են գրում:

Իրականում «լավ լեզու», որպես այդպիսին, գոյություն չունի: Լավ լեզուն գեղագրություն չէ, որ ամեն առիթով հնարավոր լինի կիրառել: Մաթեմատիկական աշխատանքի լավ լեզուն, գրականագիտական հոդվածի լավ լեզուն կամ պատմվածքի լավ լեզուն տարբեր լավ լեզուներ են:

Հաճախ ասում են. «Նրա հոդվածի լեզուն լավն է, պատկերավոր», և դպրոցում նույնիսկ դասարանական աշխատանքներից պատկերավորություն են պահանջում: Մինչդեռ լեզվի պատկերավորությունը գիտական խոսքի համար միշտ չէ, որ առավելություն է:

Գեղարվեստական գրականության լեզուն պատկերավոր է, բայց գիտնականի տեսանկյունից՝ ճշգրիտ չէ: Գիտությունը միարժեքություն է պահանջում, իսկ գեղարվեստական լեզվում հակառակը՝ բազմիմաստությունն է կարևոր: Օրինակ՝ Եսենինի տողերը. «В залихватском степном разгоне колокольчик хохочет до слез»: Մեր առջև պատկեր է՝ բովանդակությամբ շատ հարուստ, բայց ոչ միարժեք: Ի՞նչ է դա՝ զանգակի ուրախ կարկա՛ջ: Իհարկե, միայն դա չէ: Չափազանց կարևոր է, որ այս տողերում հիշատակվում են նաև արցունքները, չնայած մակերեսային ընթերցման ժամանակ կարելի է և հատկապես չկարևորել՝ ընդունելով ամբողջ արտահայտությունը որպես սովորական փոխաբերություն՝ շատ ուժգին քրքջալ: Պատկերն իր նշանակությունը ճշտում է համատեքստի շնորհիվ և լրիվ հասկանալի է դառնում միայն բանաստեղծության վերջում. «Поэтому что над всем, что



было, колокольчик хохочет до слез». Այստեղ իշխող է դառնում ճակատագրի հեգնանքի թեման՝ մարդկային կյանքի անցողիկ երևույթների վրա ծիծաղող ճակատագրի:

Գրական պատկերն աստիճանաբար կարծես «գուլակվում է» ընթերցողի կողմից:

Գրողն ընթերցողին դարձնում է իր ստեղծագործության մասնակիցը:

Գեղարվեստական կերպարի այս աստիճանական ինքնաբացահայտումը և ընթերցողի մասնակցությունը ստեղծագործական գործընթացին գեղարվեստական ստեղծագործության շատ կարևոր կողմն են: Դրանից են կախված ոչ միայն գեղագիտական հաճույքը, որ ստանում ենք գեղարվեստական գրականություն կարդալիս, այլ նաև նրա համոզչությունը: Հեղինակը կարծես ընթերցողին ստիպում է ինքնուրույն հանգել անհրաժեշտ եզրակացության: Կրկնում են, նա ընթերցողին դարձնում է իր ստեղծագործության մասնակիցը:

Նույնը կարելի է ասել նաև գեղարվեստական ստեղծագործության այնպիսի տարատեսակի մասին, ինչպիսին կատակն է: Կատակն անփոխարինելի է, օրինակ, վիճելիս: Լսարանին ծիծաղելու դրդել՝ կնշանակի կիսով չափ ապացուցել քո ճշմարտացիությունը: Գեղարվեստական կերպարը և կատակը ստիպում են ընթերցողին կամ լսողին հեղինակի մտքերի ընթացքին մասնակցել:

Ֆրանսիական ասացվածքը հիշեցնում է. «Կարևոր է, որ ծիծաղողները քո կողմից լինեն»: Վեճի հաղթողը նա է, ում հետ ծիծաղում են:

Կատակը կարևոր է դժվարին դրություններում. հոգեկան հավասարակշռությունն է վերականգնում: Սուվորովը կատակով էր ոգևորում իր զինվորներին:

Այդ պատճառով էլ երբ անհրաժեշտ է ոչ միայն տրամաբանորեն համոզել, այլ նաև հուզական առումով, գեղարվեստական կերպարը և կատակը շատ կարևոր են:

Դրանք կարևոր են գիտա-հանրամատչելի աշխատանքում և հոետորական ելույթներում: Ցանկացած դասախոս գիտի, թե ինչքան կարևոր է լսարանի թուլացած ուշադրությունը կատակի միջոցով վերականգնելը: Կատակը պահանջում է ավելի ակտիվ մասնակցություն, քան գեղարվեստական կերպարը, այն լսողին ստիպում է ոչ միայն պասիվ լսել, այլ ակտիվորեն «գլխի ընկնել» կատակի սրությունը:

Իսկ գիտական աշխատանքում պատկերը և սրամտությունը թույլատրելի են միայն որպես որոշակի դիվերտիսմենտ²: Իր բնույթով գիտական լեզուն խիստ տարբերվում

² Դիվերտիսմենտ (ֆրանս. divertissement - ուրախացնելը, ցրելը) են համարվում՝

- որպես հիմնական համերգի կամ ներկայացման լրացում՝ հաջորդ ուրախացնելու համար ծրագիր կազմող համերգային համարների շարքը.
- բալետի կամ օպերայի սյուժեի հետ անմիջական կապ չունեցող, դրանց կցված համարը կամ առանձին համարներից կազմված բալետային ներկայացումը.
- մի քանի ոչ մեծ, թեթև պիեսներից կազմված երաժշտական ստեղծագործությունը՝ մեկ կամ մի քանի գործիքի համար:



է գեղարվեստական գրականության լեզվից: Նա պահանջում է արտահայտության ճշգրտություն, մաքսիմալ սեղմություն, խիստ տրամաբանվածություն, բացառում է ամեն տեսակի «գլխի ընկնելը»:

Գիտական լեզվում պետք է «թանաքը չզգացվի»․ այն պետք է թեթև լինի: Գիտական աշխատանքի լեզուն պետք է «աննկատ» լինի: Եթե գիտական աշխատանքի ընթերցողն աշխատանքը ընթերցելիս ուշադրություն չի դարձնում՝ լավ է գրված, թե վատ, ուրեմն աշխատանքը լավ է գրված: Լավ դերձակը կոստյումն այնպես է կարում, որ «աննկատ» ենք հագնում: Գիտական շարադրանքի ամենամեծ արժանիքը (այստեղ խոսում եմ ընդհանրապես շարադրանքի, այլ ոչ թե միայն լեզվի մասին) մի մտքից մյուսին անցնելու հաջորդականության և տրամաբանականության ապահովումն է:

Միտքը զարգացնելու կարողությունը ոչ միայն տրամաբանականությունն էր, այլ նաև շարադրանքի պարզությունը:

Շատ կարևոր է, որ գիտնականը «զգա» իր ընթերցողին, ճիշտ իմանա, թե ում է դիմում:

Միշտ պետք է կոնկրետ պատկերացնել կամ երևակայել աշխատանքի ապագա ընթերցողին և գրառել զրույցը նրա հետ: Թող այդ երևակայական ընթերցողը լինի հոռետես, երդվյալ վիճող, մարդ, որն առանց համոզվելու ոչինչ չի ընդունում: Խիստ գիտական աշխատանքի դեպքում ընթերցողի այդ մտացածին կերպարը պետք է ավելի բարձր լինի. երևակայական ընթերցողը պետք է տվյալ բնագավառի մասնագետ լինի: Գիտահանրամատչելի աշխատանքների երևակայական ընթերցողը պետք է մի քիչ վատ հասկացող լինի (բայց չափավոր. չի կարելի «նեղացնել» սեփական ընթերցողին): Զրուցելով այդպիսի երևակայական ընթերցողի հետ՝ գրի առեք այն ամենը, ինչ նրան ասում եք: Ինչքան ձեր գրավոր խոսքը մոտ է բանավորին, այնքան ավելի լավ, այնքան ավելի ազատ, բազմազան, բնական հնչերանգով կլինի: Գրավոր խոսքին բնորոշ դարձվածները ծանրացնում են լեզուն: Դրանք պետք չեն: Բայց բանավոր խոսքն էլ շատ թերություններ ունի. այն միշտ չէ, որ ճշգրիտ է, խնայողական, շատ են կրկնությունները: Նշանակում է՝ երևակայական ընթերցողի հետ ձեր զրույցը գրառելուց հետո պետք է հնարավորին չափ այն կրճատել, ճշգրտել, ազատել անճշտություններից, չափից դուրս ազատ, «խոսակցական» արտահայտություններից: Գիտական աշխատանքը «կսեղմվի», կդառնա ավելի փոքրածավալ, ճշգրիտ, բայց կապահպանի կենդանի զրույցի հնչերանգները, իսկ ամենագլխավորն այն է, որ կզգացվի հասցեատերը՝ հեղինակի երևակայական զրուցակիցը:

Գրավոր լեզվի հարստացումն ու թեթևությունը հաճախ խոսակցական լեզվից են



գալիս: Խոսակցական լեզվից կարելի է փոխառնել առանձին բառեր և ամբողջական արտահայտություններ: Սակայն պետք է հիշել, որ խոսակցական արտահայտությունները ոճաբանորեն այնքան ուժեղ են և գրավոր լեզվում նկատելի, որ գիտական ճշգրիտ լեզվում դրանք չի կարելի իրարից մոտ հեռավորությունների վրա կրկնել:

* * *

Գիտության մեջ շատ կարևոր է հայտնաբերված երևույթի համար անհարժեշտ նշանակում՝ եզր (տերմին) գտնելը: Հաճախ դա նշանակում է ամրացնել արված դիտարկումը կամ ընդհանրացումը, գիտության մեջ նկատելի դարձնել, ներմուծել գիտություն, նրա նկատմամբ ուշադրություն գրավել:

Եթե ցանկանում եք, որ ձեր դիտարկումը մտնի գիտություն ու «կնքեք» նրան, անուն, անվանում տվեք: Ձեր նորածին գիտություն ներմուծելով՝ նրան գիտնականների հանրությանը ներկայացրեք, իսկ դրա համար անվանե՛ք նրան և ոչ մի բան առանց անունի մի՛ թողեք: Բայց դա շատ հաճախ մի՛ արեք: Լեզվաբանության և գրականագիտության բնագավառի մի շարք աշխատանքներ գերհագեցված են նոր եզրերով: Իր կյանքի ընթացքում գիտնականին բավական է աշխատանքի մեջ երկու-երեք եզր ստեղծել իր հայտնաբերած նշանակալից երևույթների համար:

Նյութոնը ոչ այնքան հայտնագործեց երկրի ձգողականության օրենքը (նրանից առաջ էլ բոլորը գիտեին, որ առարկաներն ընկնում են գետնին, և դրանք գետնից բարձրացնելու համար որոշակի ճիգ պետք է գործադրել), որքան բոլորին հայտնի երևույթի համար եզր ներմուծեց և դրանով այն «նկատելի» դարձրեց գիտության մեջ:

Նոր նշանակում, նոր եզր ստեղծելու սովորական եղանակ է փոխաբերության դիմելը: Փոխաբերություն կլինի նաև բառի փոխառումը հարևան բնագավառից կամ ուրիշ բնույթի գիտությունից:

Հասկանալի է, որ ոչ մի փոխաբերություն և ոչ մի պատկեր իր սկզբնական բազմիմաստության պատճառով չեն կարող բացարձակ ճշգրիտ լինել, ամբողջությամբ արտահայտել երևույթը: Այդ պատճառով սկզբում նոր եզրը միշտ անհաջող է թվում: Միայն այն ժամանակ, երբ փոխաբերության կամ պատկերի հետ կապվում է մեկ կոնկրետ նշանակություն, հետազոտողները «վարժվում են» դրան, նոր եզրի հիմքում ընկած պատկերը կորցնում է իր սրությունը, եզրը մտնում է կիրառության մեջ, և հնարավոր է, որ շատ էլ հաջող համարվի:

Գիտական ճիշտ նշանակությունը «աճում» է կերպարի միջից: Սկզբում պատկերը կարծես ստվերում է գիտական եզրի ճիշտ նշանակությունը, հետո ճիշտ



նշանակությունն է ստվերում պատկերը:

Ճշգրիտ պետք է լինի գիտնականի դիտարկումն ինքնին, վառ սահամազատված ու յուրահատուկ՝ ինքը երևույթը, որը նշանակվում է նոր եզրով, այդ դեպքում ճշգրիտ կլինի նաև եզրը:

Այն քիչ դեպքերում էլ, երբ գիտնականը կարող է և նույնիսկ պարտավոր է դիմել փոխաբերության, պատկերի, անհրաժեշտ է հետևել դրանց «նյութական» բովանդակությանը: Տասնիններորդ դարի լավ կրթություն ունեցող մի գրականագետի երկում կարդում ենք այսպիսի արտահայտություն. «Դանթեն մի ոտքով ամուր կանգած էր միջնադարում, իսկ մյուսով ողջունում էր վերածննդի արշալույսը»: Շատ սրամիտ և դիտողունակ պատմաբան Վ. Օ. Կյուլենսկին իր «Ռուսական պատմության դասախոսությունների դասընթաց» աշխատությունում այսպես է ծաղրել այդ արտահայտությունը. «Ալեքսեյ Միխայլովիչ ցարը բարեփոխումների շարժման մեջ ընդունել էր այսպիսի դիրք... մի ոտքով նա ամուր հենվել էր հայենական ուղղափառ հնության վրա, իսկ մյուսը նա արդեն հանել էր այդ սահմանից, և այդպես էլ մնաց այդ անվճռական անցումային դրքում»:

Այստեղ պատկերը ծաղրված է: Ծաղրն արդարացված է նրանով, որ երկու դեպքում էլ խոսքը երկու մեծագույն անցումային դարաշրջանների մասին է. մեկը՝ Արևմտյան Եվրոպայի պատմության մեջ, մյուսը՝ Ռուսաստանի: Իհարկե Ալեքսեյ Միխայլովիչը Դանթե չէ, և նրա վրա արժեր ծիծաղել: Բայց հենց նույն Կյուլենսկու խոսքում էլ կարող ենք հանդիպել անհաջող արտահայտության, անհաջող պատկերի. «Այդ հայացքը... քննադատը չկարողացավ ամբողջական արտահայտել՝ արտահայտելով այն մասերով, բեկորներով»: «Բեկորներով» ինչ-որ բան ասել չի կարելի: Բայց եթե ձգտենք պահպանել «բեկորների» պատկերը, ապա արտահայտությունը հեշտությամբ կարելի է ձևափոխել այսպես. «Նրա մտքերն ապակու նման պարզ և մաքուր էին, բայց նա արտահայտեց դրանք ոչ ամբողջական, կարծես բեկորներով»: Միշտ պետք է հետևել, որ պատկերը տեղին և մտածված լինի: Խորհրդային պատմաբան Բ. Դ. Գրեկովը Նովգորոդի մասին իր աշխատությունում գրել է. «Կիրակի օրը Վոլխովի վրա ավելի շատ առագաստ կար, քան սայլ շուկայում»: Եվ սա իմաստավորված է նրանով, որ համատեքստում խոսքը հենց առևտրի մասին է:

Չի կարելի ուղղակի «գեղեցիկ» գրել: Պետք է գրել ճշգրիտ և իմաստավորված, պատկերներին դիմելը պետք է արդարացված լինի:

Ռուսաց լեզվի մեծ վարպետ պատմաբան Կյուլենսկին կարողանում էր մտքերը չլղոզել, երբեմն դրանք արտահայտելով ակնարկներով, մի տեսակ, ոճաբանական խորամանկությունների դիմելով, և դա երբեմն ավելի ուժեղ էր ազդում, քան ամենապայծառ պատկերը: Համեմատեք նրա հետևյալ արտահայտությունները.

«Գիտությունների ակադեմիային կից համալսարանում դասախոսություններ



չէին կարդում (խոսքը 18-րդ դարի մասին է. Դ. Լ.), բայց ուսանողներին կտրում էին», կամ Պետրոսի ժամանակների մասին՝ «Գանձագողությունը և կաշառակերությունը հասել էին աննախադեպ չափսերի, թերևս միայն հետո...»: Յար Ալեքսեյ Միխայլովիչի ստեղծագործելու մասին էլ նա գրում է. «Պահպանվել են նրա գրած մի քանի տողեր, որոնք հեղինակին կարող են ոտանավոր թվալ»:

Կյուչևսկին նաև հակադրությունների վարպետ էր: Ահա մի քանի օրինակ.
«Անձնական ազատությունը դարձել էր պարտադիր և մտրակով էր պահպանվում».
սա Պետրոս Առաջինի ժամանակաշրջանի մասին է: Կամ Եվգենի Օնեգինի երևակայական նախնու մասին. «Նա (այդ «նախնին». Դ. Լ.) ձգտում էր ուրիշների մոտ յուրային դառնալ, բայց միայն յուրայինների մոտ էր օտար դառնում»: Վերջին դեպքում հանդիպում ենք խաչաձև հակադրության, ինչին Կյուչևսկին փայլուն էր տիրապետում: Ահա նրա այդպիսի խաչաձև հակադրության մի օրինակ, որն անմիջապես առնչվում է մեր թեմային. «Դժվար գրել և խոսելը հեշտ գործ է, իսկ թեթև գրելն ու խոսելը՝ դժվար»:

Գիտական եզրերի մասին խոսելիս պետք է հիշենք պատմության մեջ եզրերի հատուկ դերի մասին, երբ գիտական հասկացության համար ընտրվում է հնացած բառ կամ բառակապակցություն: Իրենց աշխատանքներում հնաբանության, դրվագադրության, ամբողջական արտահայտությունների մեջբերումը պատմաբանների դեպքում լրիվ արդարացված է, քանի որ կյանքի հին երևույթները ամենալավը հին լեզվով են արտահայտվում: Բայց ամեն դեպքում չի կարելի չարաշահել:

Լավ է, երբ պատկերն աստիճանաբար է բացվում և նկարագրվող երևույթի մեջ տարբեր արտացոլումներ է գտնում, այսինքն երբ պատկերը նկարագրվող երևույթի հետ հպվում է շատ կողմերից: Բայց երբ այն ուղղակի կրկնվում է (նույնիսկ ոչ միշտ ուղղակիորեն), դա արդեն վատ է: Կյուչևսկին մի տեղում ասում է, որ պոլովցիների կեռ սուրը Ռուսիայի գլխին էր կախված, իսկ մի քիչ հետո՝ որ կեռ յաթաղանը կախված էր Եվրոպայի գլխին: Անհաջող և ոչ ճշգրիտ պատկերը կրկնությունից լրիվ անտանելի է դառնում, ինչքան էլ տարբերակված լինի:

Ճոռոմ արտահայտություններն առանձին հեղինակների տարբեր աշխատանքներում նորից ու նորից հայտնվելու հակում ունեն: Այսպես, արվեստաբանների խոսքում հաճախ են կրկնվում այնպիսի արտահայտություններ, ինչպես «զրնգուն գույն», «խլացված կոլորիտ» և այլ «երաժշտականություն»: Վերջին ժամանակներս մշակութաբանական քննադատների համար նորաձև է դարձել «ճկուն» ածականը՝ «ճկուն ձև», «ճկուն գիծ», «ճկուն կոմպոզիցիա» և նույնիսկ «ճկուն գույն»: Այս ամենը լեզվի աղքատության պատճառով է, իհարկե, և ոչ թե «ճկուն» բառն է առանձնահատուկ:



Գլխավորը՝ պետք է ձգտել, որ արտահայտությունը հենց սկզբից ճիշտ հասկացվի: Դրա համար կարևոր նշանակություն ունի բառերի ճիշտ դասավորությունը և բուն արտահայտության հակիրճությունը: Օրինակ՝ իմ «Մարդը Հին Ռուսիայի գրականության մեջ» աշխատության 79-րդ էջում (երկրորդ հրատարակություն, 1970թ.) տպված է. «Ահա ինչու է կոչվում Ստեփան Պերմցին «քաջարի» Իմաստուն Եպիֆանիի կողմից...» Երկիմաստ արտահայտություն է: Բառերի մեկ այլ դասավորությունն անմիջապես կուղղի դա. «Ահա ինչու Ստեփան Պերմցին «քաջարի» է կոչվում Իմաստուն Եպիֆանիի կողմից...»: Կամ ավելի հաջող կլինի. «Ահա ինչու Իմաստուն Եպիֆանին Պերմցի Ստեփանին «քաջարի» է կոչում...»:

Ընթերցողն ուշադրությունը պետք է կենտրոնացնի հեղինակի մտքին և ոչ թե գլխի ընկնի, թե հեղինակն ինչ է ցանկացել ասել: Դրա համար էլ՝ որքան պարզ, այնքան լավ: Պետք չէ վախենալ նույն բառի կամ դարձվածքի կրկնությունից: Ոճաբանական այն պահանջը, որ նույն բառը չի կարելի իրար մոտ կրկնել, հաճախ սխալ է: Այդ պահանջը չի կարող բոլոր դեպքերի համար ճիշտ լինել: Հասկանալի է, որ լեզուն պետք է հարուստ լինի, և այդ պատճառով տարբեր հասկացությունների և տարբեր երևույթների համար պետք է տարբեր բառեր օգտագործել: Նույն բառի տարբեր իմաստներով կիրառումը կարող է խառնաշփոթ առաջացնել: Այդպես անել չարժե:

Սակայն եթե խոսվում է միևնույն երևույթի մասին, բառը օգտագործվում է միևնույն իմաստով, ապա ամենևին հարկ չկա փոխելու: Իհարկե, պատահում են դժվար դեպքեր, որ որևէ խորհրդով չես նախատեսի: Պատահում է, որ նույն հասկացությունը (հետևաբար և միևնույն բառը) օգտագործվում է հենց մտքի աղքատության պատճառով: Այդ դեպքում, հասկանալի է, եթե միտքը բարդացնել չի կարելի, ապա պետք է մտքին օգնել ոճաբանորեն, բառերի միջոցով միտքը բազմաձև դարձնելով: Ամենալավը մտքին մտքով օգնելն է, ոչ թե մտքի աղքատությունը բառերով սքողելը:

Արտահայտության ռիթմիկություն և հեշտ ընթերցելիություն: Մարդիկ կարդալիս մտովի արտասանում են տեքստը: Պետք է, որ այն հեշտորեն արտասանվի: Եվ այդ դեպքում գլխավորը բառերի տեղադրումն է և արտահայտության կառուցվածքը: Չի կարելի չարաշահել ստորադասական նախադասությունները: Ձգտեք գրել կարճ արտահայտություններով՝ հոգ տանելով, որ արտահայտությունից արտահայտություն անցումը թեթև լինի: Գոյականը (եթե նույնիսկ կրկնվում է) ավելի լավ է, քան դերանունը: Խուսափեք «վերջին դեպքում», «ինչպես վերևում ասված է » և այդպիսի այլ արտահայտություններից:

Վախեցեք դատարկ պերճախոսությունից: Գիտական աշխատանքի լեզուն պետք է թեթև, աննկատ լինի, պերճախոսությունը նրանում անթույլատրելի է, իսկ նրա գեղեցկությունը չափի զգացողությունն է:

Իսկ ընդհանրապես արժե հիշել, որ լեզվական արտահայտությունից դուրս



միտք չկա, և բառի փնտրտուքն ըստ էության մտքի փնտրում է: Խոսքի անճշտություններն առաջանում են մտքի անճշտությունից: Այդ պատճառով գիտնականին, ինժեներին, տնտեսագետին, ցանկացած բնագավառի մասնագետի, հարկ է հոգ տանել ամենից առաջ մտքի ճշգրտության մասին: Մտքի և լեզվի խիստ համապատասխանությունը հենց բերում է ոճի թեթևություն: Լեզուն պետք է պարզ լինի (խոսում եմ գիտական և սովորական լեզվի մասին, ոչ թե գեղարվեստական գրականության լեզվի):

Լեզվի թեթևությունը կարող է կեղծ լինել, օրինակ՝ «գրչի ճարտարությունը»: «Ճարտար գրիչը» պարտադիր չէ, որ լավ լեզու լինի: Մարդ իր մեջ պետք է լեզվական ճաշակ դաստիարակի: Վատ ճաշակը նույնիսկ տաղանդավոր հեղինակներին է սպանում:

Քսաներկուերորդ նամակ Կարդալ սիրեցեք

Յուրաքանչյուր մարդ պարտավոր է (կրկնում եմ՝ պարտավոր է) հոգալ իր մտավոր զարգացման մասին: Դա նրա պարտականությունն է հասարակության առաջ, որտեղ ապրում է, և հենց իր առաջ:

Մտավոր ինքնազարգացման հիմնական (բայց ոչ միակ) եղանակը ընթերցանությունն է:

Ընթերցանությունը պատահական չպետք է լինի: Դա ժամանակի շատ մեծ ծախս է, իսկ ժամանակը մեծագույն արժեք է, որը չի կարելի վատնել: Ընթերցել պետք է ծրագրով, հասկանալի է, դրան խստորեն չհետևելով, շեղվելով դրանից այն դեպքում, երբ ընթերցողի համար լրացուցիչ հետաքրքրություններ են առաջանում: Բայց սկզբնական ծրագրից յուրաքանչյուր շեղման դեպքում պետք է նորը կազմել՝ հաշվի առնելով ծագած նոր հետաքրքրությունները:

Ընթերցանությունը, որպեսզի արդյունավետ լինի, պետք է հետաքրքրի ընթերցողին: Անհրաժեշտ է, որ մարդ իր մեջ զարգացնի հետաքրքրությունն ընթերցանության նկատմամբ ընդհանրապես կամ մշակույթի որոշակի ուղղություններով: Հետաքրքրությունը որոշ չափով կարող է ինքնադաստիարակության հետևանք լինել:

Ինքն իր համար ընթերցանության ծրագրեր կազմելն այնքան էլ հեշտ չէ, և դա պետք է անել բանիմաց մարդկանց հետ խորհրդակցելով, օգտվելով տարբեր տեսակի տեղեկատվական գրքերից:

Ընթերցանության վտանգը տեքստերի «անկյունագծային» դիտման կամ արագ ընթերցելու այլ մեթոդների նկատմամբ հակումների զարգացումն է (գիտակցաբար կամ ակամա):



«Արագ ընթերցանությունը» գիտելիքի պատրանք է ստեղծում: Դա թույլատրելի է միայն որոշակի մասնագիտությունների համար՝ խուսափելով արագ ընթերցելու սովորույթ ձևավորելուց. դա հանգեցնում է ուշադրության տկարացման:

Նկատել էք, թե ինչ մեծ տպավորություն են թողնում գրական այն երկերը, որոնք ընթերցվում են հանգիստ, անշտապ և խաղաղ պայմաններում, օրինակ՝ հանգստավայրում կամ ոչ ծանր և ուշադրությունը չշեղող հիվանդության ժամանակ:

Գրականությունը մեզ կյանքի հսկայական, լայնածավալ և խորագույն փորձ է տրամադրում: Նա մարդուն մտավորական է դարձնում, նրա մեջ ոչ միայն գեղեցիկի զգացողությունն է զարգացնում, այլ նաև ըմբռնումը՝ կյանքի ըմբռնումը՝ իր բոլոր բարդություններով, դեպի ուրիշ ժամանակաշրջաններ և ուրիշ ժողովուրդներ ուղեկցորդ է դառնում, ձեր առաջ բացում է մարդկանց սրտերը: Մի խոսքով՝ ձեզ խելոք է դարձնում: Բայց այս ամենը տրվում է միայն այն ժամանակ, երբ կարդում եք՝ խորամուխ լինելով բոլոր մանրուքների մեջ: Քանի որ հաճախ ամենակարևորը թաքնված է լինում հենց մանրուքներում: Իսկ այդպիսի ընթերցանություն հնարավոր է միայն այն ժամանակ, երբ կարդում եք հաճույքով, ոչ նրա համար, որ այս կամ այն ստեղծագործությունը պետք է կարդալ (դպրոցական ծրագրով թե նորաձևության կամ փառամոլության մղումով), այլ այն պատճառով, որ ձեզ դուր է գալիս. զգացել եք, որ հեղինակն ասելիք ունի, ձեզ փոխանցելու բան ունի և դա կարողանում է անել: Եթե առաջին անգամ ստեղծագործությունն անուշադիր եք կարդացել, կարդացեք կրկին, երրորդ անգամ: Մարդ պետք է ունենա սիրելի ստեղծագործություններ, որոնց պարբերաբար անդրադառնում է, որոնք գիտի մանրամասնորեն, որոնց մասին համապատասխան միջավայրում կարող է հիշեցնել շրջապատողներին և դրանով մե՛րթ բարձրացնել տրամադրությունը, մե՛րթ լիցքաթափել իրադրությունը (երբ իրար նկատմամբ լիցքավորվում են), կա՛մ ծիծաղեցնել, կա՛մ էլ ձեր կամ ուրիշի հետ պատահածի մասին վերաբերմունք արտահայտել: «Անշահախնդիր» ընթերցանության ինձ վարժեցրել է գրականության իմ դպրոցական ուսուցիչը: Ես սովորել եմ այն տարիներն, երբ ուսուցիչները հաճախ էին ստիպված լինում բացակայել դասերից. նրանք կա՛մ խրամատ էին փորում Լենինգրադի մատույցներում, կա՛մ պարտավոր էին օգնել որևէ ֆաբրիկայի բանվորների, կա՛մ ուղակի հիվանդ էին լինում: Լեոնիդ Վլադիմիրովիչը (այսպես էին անվանում իմ գրականության ուսուցչին) հաճախ էր դասարան գալիս, երբ բացակայում էին մյուս ուսուցիչները, անբռնազու ձևով նստում էր ուսուցչի սեղանին և պայուսակից գրքեր հանելով՝ առաջարկում էր ինչ-որ բան կարդալ: Մենք արդեն գիտեինք, թե ինչպես է նա կարողանում կարդալ, ինչպես է կարողանում կարդացածը բացատրել, մեզ հետ միասին ծիծաղել, ինչ-որ բանով հիանալ, զարմանալ գրողի վարպետությամբ և ուրախանալ ապագայով: Այդպես լսեցինք հատածներ «Պատերազմ և խաղաղություն», «Կապիտանի աղջիկը» վեպերից, Մոպասանի մի քանի



պատմվածքներ, Սոլովեյ Բուդոմիրովիչի մասին ասքը, մեկ այլ ասք Դոբրինյա Նիկիտիչի մասին, Կոհլովի առակները, Դերժավինի ծոները և շատ, շատ այլ բաներ: Մինչև հիմա սիրում եմ այն, ինչ լսել եմ այն ժամանակ մանուկ հասակում: Իսկ երեկոյան տանը հայրս և մայրս էին սիրում կարդալ: Կարդում էին իրենց համար, իսկ որոշ դուր եկած մասերը կարդում էին նաև մեզ համար, բարձրաձայն: Լեսկով էին կարդում, Մամին-Սիբիրյակ, պատմավեպեր. այն ամենը, ինչ դուր էր գալիս իրենց և ինչ աստիճանաբար սկսեց դուր գալ նաև մեզ:

«Անշահագրգիռ», սակայն հետաքրքիր ընթերցանություն. ահա, թե ինչն է ստիպում սիրել գրականությունը և ինչն է ընդարձակում է մարդու մտահորիզոնը:

Կարողացեք ընթերցել ոչ միայն դպրոցում պատասխանելու համար և ոչ այն պատճառով, որ այս կամ այն գործը այդ ժամանակ բոլորն են կարդում՝ մոդայիկ է: Կարողացեք կարդալ հետաքրքրությամբ և անշտապ:

Ինչո՞ւ է հիմա հեռուստատեսությունը մասնակիորեն դուրս մղում գրքին: Որովհետև հեռուստատեսությունը ձեզ ստիպում է առանց շտապելու դիտել որևէ հաղորդում, հարմար նստել, որ ոչինչ չխանգարի, նա շեղում է ձեզ հոգսերից, նա ձեզ թելադրում է՝ ինչպես և ինչ դիտեք: Բայց փորձեք ձեր ճաշակով գիրք ընտրել, ժամանակավորապես կտրվեք ամբողջ աշխարհից, հարմար նստեք և կհասկանաք, որ կան շատ գրքեր, առանց որոնց չի կարելի ապրել, որոնք ավելի կարևոր և հետաքրքիր են, քան շատ հաղորդումներ: Չեմ ասում՝ դադարեք հեռուստացույց դիտելուց: Բայց ասում եմ՝ դիտեք ընտրությամբ: Ձեր ժամանակը ծախսեք այն բանի վրա, որն արժանի է դրան: Նաև շատ կարդացեք և կարդացեք խստագույն ընտրությամբ: Ինքներդ կատարեք ձեր ընտրությունը՝ համապատասխանեցնելով այն բանի հետ, թե ձեր ընտրած գիրքն ինչ դեր է ստանձնել մարդկային մշակույթի պատմության մեջ, որպեսզի դառանա դասական: Սա նշանակում է, որ դրա մեջ ինչ-որ էական բան կա: Իսկ գուցե մարդկային մշակույթի համար էական այդ բանը նաև ձե՞զ համար էական լինի:

Դասական է այն ստեղծագործությունը, որը դիմացել է ժամանակի փորձությանը: Նրա հետ դուք ձեր ժամանակը չեք կորցնի: Սակայն դասական գրականությունն այսօրվա բոլոր հարցերին պատասխանել չի կարող: Դրա համար պետք է նաև ժամանակակից գրականություն կարդալ: Բայց ամեն մոդայիկ գրքի հետևից մի՛ ընկեք: Ունայնամիտ մի՛ եղեք: Ունայնամտությունը մարդուն ստիպում է վատնել իր ունեցած ամենամեծ և ամենաթանկարժեք կապիտալը՝ իր ժամանակը:

**Քսաներեքերորդ նամակ
Անձնական գրադարանների մասին**



Այսօր շատ տներում կան անձնական գրադարաններ: Նույնիսկ այսպիսի երևույթ կա՝ գրքային բուն: Գրքային բուն. հիանալի՝ է: Չէ՞ որ գրքային բուն է և ոչ թե այլ տեսակի: Եվ լավ է այն, որ մարդիկ հետաքրքրվում են գրքերով, գնում են, գրքերի համար հերթ են կանգնում, դա խոսում է մեր հասարակության մշակութային որոշակի վերելքի մասին: Բայց ինձ կարող են ասել, որ գրքերը չեն հասնում այն մարդկանց, ում որ դրանք պետք են: Երբեմն որպես զարդարանք են օգտագործում. գնվում են գեղեցիկ կազմերի համար և այլն: Բայց դա էլ այնքան սարսափելի չէ: Գիրքը միշտ կգտնի նրան, ում հարկավոր է: Օրինակ, մեկը գիրք է գնում, որը զարդարում է իր ճաշասենյակը: Բայց նա կարող է և՛ որդի, և՛ զարմիկներ ունենալ: Հիշում ենք, թե մարդիկ ինչպես սկսեցին գրականությամբ հետաքրքրվել գրադարանների միջոցով, որ իրենց հայրերը կամ հարազատներն ունեին: Այնպես որ գիրքը երբևէ կգտնի իր ընթերցողին: Այն կարող է վաճառվել, և դա էլ վատ չէ, գրքերի որոշակի պաշար կլինի, հետո այն նորից կգտնի իր ընթերցողին:

Ինչ վերաբերում է անձնական գրադարանին, կարծում եմ, այս հարցին պետք է մեծ պատասխանատվությամբ մոտենալ: Ոչ միայն այն պատճառով, որ անձնական գրադարանը համարում են տիրոջ այցեքարտը, այլ այն պատճառով, որ մեկ այլ դեպքում գրադարանը հեղինակության հարց է դառնում: Եթե մարդը գրքերը միայն հեղինակության համար է գնում, իզուր է դա անում: Առաջին իսկ զրույցի ժամանակ նա իրեն կմատնի: Պարզ կդառնա, որ նա ինքը գրքեր չի կարդացել, իսկ եթե կարդացել է, ապա չի հասկացել:

Սեփական գրադարանը չի կարելի շատ մեծ անել, «մեկ անգամվա ընթերցման» գրքերով լցնել չի կարելի: Այդպիսի գրքերը գրադարանից պետք է վերցնել: Տանը պետք է լինեն կրկնակի ընթերցման գրքերը, դասականներ (և ընդ որում սիրելի գրքերը), իսկ ավելի շատ՝ տեղեկագրեր, բառարաններ, մատենագիտություն: Դրանք երբեմն կարող են ամբողջ գրադարանի փոխարինել: Անպայման սեփական մատենավարություն ունեցեք և այդ մատենավարական քարտերի վրա նշեք, թե այդ գրքում ինչն էք կարևոր և պետքական համարում:

Կրկնում եմ: Եթե գիրքը ձեզ պետք է մեկ անգամ կարդալու համար, մի՛ գնեք: Անձնական գրադարան կազմելու արվեստը հենց այն է, որ զերծ մնաք այդպիսի գրքեր ձեռք բերելուց:

Քսանչորսերորդ նամակ

Երջանիկ լինենք

(ի պատասխան դպրոցականի նամակի)

Թանկագի՛ն Սերյոժա: Դու միանգամայն իրավացի ես՝ սիրելով հին շենքերը, հին իրերը՝ այն ամենը, ինչը մարդուն ուղեկցել է անցյալում և ուղեկցում է ներկա կյանքում: Այդ ամենը ոչ միայն մտել է մարդու գիտակցության մեջ, այլ ինքը նաև



ինչ-որ բան վերցրել է մարդկանցից: Կարող է թվալ, թե իրերը նյութական են, բայց նրանք մեր հոգևոր մշակույթի մասն են դարձել, ձուլվել են մեր ներաշխարհին, որը պայմանականորեն կարելի էր մեր «հոգին» անվանել: Չէ՞ որ ասում ենք «ամբողջ հոգով», կամ «հոգուս համար է պետք», կամ «հոգով է արված»: Այսպիսի բաներ: Այն ամենը, ինչ հոգով է արված, հոգուց է գալիս, մեզ պետք է հոգու համար. դա էլ հենց «հոգևոր մշակույթն» է: Ինչքան շատ է մարդը շրջապատված այդ հոգևոր մշակույթով, թաթախված նրա մեջ, այնքան նա երջանիկ է, այնքան նրա համար հետաքրքիր է ապրելը, կյանքը բովանդակություն է ստանում: Իսկ աշխատանքի, ուսման, ընկերների և ծանոթների, երաժշտության, մշակույթի նկատմամբ զուտ ձևական մոտեցման դեպքում այդ «հոգևոր մշակույթը» չկա: Հենց սա է «անհոգիությունը»՝ ոչինչ չզգացող, սիրելու, անձնազոհության, բարոյական և բարոյագիտական իդեալներ ունենալու անկարող մեխանիզմի կյանքը:

Եկեք երջանիկ մարդիկ լինենք, այսինքն՝ կապվածություններ ունեցող, ինչ-որ կարևոր բան խորապես և լրջորեն սիրող, սիրելի մարդկանց և գործի համար ինքն իրեն զոհաբերել կարողացող: Այս ամենը չունեցող մարդիկ դժբախտ են, դատարկ ձեռքբերումներով կամ ցածր, «վաղանցիկ» հաճույքներում իրենց մաշող տխուր կանքով են ապրում:

Քսանհինգերորդ նամակ Խղճի թելադրանքով

Ամենալավ վարքն այն է, որը որոշվում է ոչ թե արտաքին հրահանգներով, այլ հոգևոր անհրաժեշտությամբ: Հոգևոր անհրաժեշտությունը, թերևս, հատկապես լավ է, երբ բնազդաբար է: Առանց մտածելու պետք է ճիշտ վարվել, առանց երկար մտորելու: Լավ վարվելու, մարդկանց բարիք անելու բնազդային հոգևոր պահանջմունքը մարդու մեջ ամենաարժեքավորն է:

Բայց այդ հոգևոր պահանջմունքը միշտ չէ, որ մարդուն տրված է լինում ծնված օրից: Մարդու մեջ դա դաստիարակվում է և դաստիարակվում է հենց իր կողմից՝ ճիշտ, բարի ապրելու նրա վճռականությամբ:

Հեծանիվ քշել սովորելիս սկզբում լսում ենք ընկերների թեթև խորհուրդները, ասենք՝ դեկն այն կողմ թեքել, դեպի ուր ընկնում ենք: Բայց շուտով քշում ենք առանց մտածելու որևէ կանոնի մասին, և լավ ու ազատ քշում ենք ամբողջ կյանքի ընթացքում:

Իմ «նամակներում» ես էլ եմ առաջարկում «հեծանիվ քշելու» ոչ բարդ կանոններ՝ ապրել ազնիվ, ճշմարտորեն: Բայց դա միայն սկզբի համար է անհրաժեշտ: Իսկ «խղճի թելադրանքով» ապրել պետք է բնազդորեն, առանց մտածելու միշտ ճիշտ լուծումները գտնել, առանց գրքեր նայելու: Ապրելն ավելի դժվար է, քան



հեծանիվ քշելը: Այդ պատճառով էլ ավելի շատ խորհուրդներ տալու հարկ է լինում:

Բայց այժ, թե ինչին ուշադրություն դարձրեք: Երբ դեռ նոր եք սովորում հեծանիվ քշել, երբ մտածում եք, թե որ կողմ թեքեք, շատ ջանք եք վատնում: Իսկ երբ սովորել եք և չեք մտածում, դուք համարյա չեք էլ հոգնում: Ահա իմ խորհուրդը՝ սովորե՛ք միանգամից, առանց երկար մտածելու գտնել ճիշտ լուծումները: Ապրելը հեշտ կլինի:

Այդ պատճառով էլ իմ «Բարու և սքանչելի մասին նամակները» ձեզ միայն սկզբում պետք կլինեն: Իսկ հետո ապրեք բարությանը, առանց մտածելու նամակներում բերված «կանոնների» մասին: «Կանոնները» միայն ճանապարհի սկզբի համար են: Ձգտեք բարու ճանապարհով նույնքան հեշտ, բնագոյրեն գնալ, ինչպես քայլում եք: Շրջապատող աշխարհ կոչվող մեր այս հիանալի այգու արահետներն ու ճանապարհներն այնքան հեշտ ու հարմար են, հանդիպումները՝ այնքան հետաքրքիր, եթե միայն «սկզբնական տվյալները» ձեր կողմից ճիշտ են ընտրված:

Այսպիսով, կարդալուց հետո մի կո՛ղմ դրեք իմ նամակները և ինքներդ ձեզ համար ճիշտ լուծումներ գտեք և ձգտեք չչեղվել, որ բոլոր լուծումները ուղիղ ձեր սրտից գան: Իսկ ես ձեր ետևից ձեռքով կանեմ ...

Քսանվեցերորդ նամակ Սովորե՛լ սովորեք

Մտնում ենք մի դար, որտեղ կրթությունը, գիտելիքները, մասնագիտական հմտությունները մարդու կյանքում որոշիչ դեր կունենան: Առանց գիտելիքների, ի դեպ, գնալով բարդացող, ուղղակի հնարավոր չի լինի աշխատել, օգուտ բերել: Քանի որ ֆիզիկական աշխատանքն իրենց վրա կվերցնեն ավտոմատները և ռոբոտները: Նույնիսկ հաշվումները կկատարվեն համակարգիչներով, ինչպես նաև գծագրերը, հաշվարկները, հաշվետվությունները, նախագծումները և այլն: Մարդը նոր գաղափարները կներդնի, կմտածի այն հարցերի մասին, ինչի մասին մեքենան չի կարողանա մտածել: Դրա համար մարդու ընդհանուր մտավորականությունը, նորը ստեղծելու կարողությունը և, իհարկե, բարոյական պատասխանատվությունը, ինչը ոչ մի դեպքում չի կարող մեքենան կրել, ավելի ու ավելի շատ պետք կլինեն: Նախորդ դարերի պարզ բարոյականությունը գիտության դարում անասելի կբարդանա: Սա պարզ է: Նշանակում է, մարդու վրա ոչ թե ուղղակի մարդ, այլ գիտության մարդ, մեքենաների և ռոբոտների դարում տեղի ունեցողի համար բարոյապես պատասխանատու մարդ լինելու ծանրագույն և բարդագույն խնդիր կընկնի: Ընդհանուր կրթությունը կարող է ստեղծել ապագայի մարդուն՝ ստեղծագործական, նոր ամեն ինչը արարող և բարոյապես պատասխանատու այն ամենի համար, ինչ կստեղծվի:

Ուսում. ահա, թե հիմա երիտասարդ մարդուն ամենավաղ հասակից ինչ է



հարկավոր: Պետք է միշտ սովորել: Մեծագույն գիտնականները մինչև իրենց կյանքի վերջը ոչ միայն սովորեցրել են, այլ նաև սովորել: Սովորելուց դադարես՝ նաև սովորեցնել չես կարող: Քանի որ գիտելիքները գնալով աճում և բարդանում են: Ընդ որում պետք է հիշել, որ սովորելու համար ամենանպաստավոր շրջանը երտասարդությունն է: Մարդու միտքը հատկապես երիտասարդության, մանկության, պատանեկության շրջանում շատ ավելի ընկալուն է: Ընկալուն է լեզուներ (ինչը շատ կարևոր է), մաթեմատիկա սովորելու նկատմամբ, ուղղակի գիտելիք յուրացնելու և գեղագիտական զարգացման նկատմամբ, ինչը բարոյական զարգացման կողքին է և հաճախ խթանում է այն:

Կարողացեք չծախսել ժամանակը դատարկ բաների, «հանգստի» վրա, որը երբեմն ավելի շատ է հոգնեցնում, քան ամենաձանր աշխատանքը, ձեր պայծառ միտքը անհիմաստ և աննպատակ տեղեկատվության պղտոր հոսքերով մի՛ լցրեք: Ձեզ ուսման համար պահպանեք, այնպիսի գիտելիքների և հմտությունների ձեռքբերման համար, որ միայն երիտասարդ ժամանակ հեշտ ու արագ կյուրացնեք:

Ահա այստեղ լսում եմ երիտասարդ մարդու ծանր հոգոցը՝ ի՞նչ տաղտկալի կյանք եք առաջարկում մեր երիտասարդությանը: Միայն սովորել: Իսկ ո՞ր մնացին հանգիստը, զվարճությունները: Ի՞նչ է, չուրախանա՞նք էլ:

Իհա՛րկե ոչ: Գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը նույնպես սպորտ է: Ուսումը ծանր է, եթե դրա մեջ չենք կարողանում ուրախություն գտնել: Պետք է սովորելը սիրենք և հանգստի ու զվարճանքների ձևերից էլ ընտրենք ուսուցողները՝ ընդունակ ինչ-որ բան սովորեցնելու, զարգացնելու այնպիսի հմտություններ, որոնք կյանքում պետք կգան:

Իսկ եթե սովորելը դուր չի գալի՞ս: Այդպիսի բան չի կարող պատահել: Նշանակում է՝ ուղղակի դեռ չեք բացահայտել այն ուրախությունը, որը գիտելիքների և հմտությունների յուրացումը բերում է երեխային, պատանուն, աղջկան:

Նայեք փոքրիկ երեխային. ի՞նչ հաճույքով է սովորում քայլել, խոսել, տարբեր սարքեր քրքրել (տղաները), տիկնիկներին խնամել (աղջիկները): Աշխատե՛ք պահպանել նորը յուրացնելու այդ ուրախությունը: Դա ամենաշատը հենց ձեզանից է կախված: Մի՛ երգվեք՝ սովորել չեմ սիրում: Իսկ դուք բոլոր առարկաները, որ դպրոցում անցնում եք, փորձեք սիրել: Եթե դրանք ուրիշներին դուր են եկել, ձեզ ինչո՞ւ պիտի դուր չգան: Արժեքավոր գրքեր կարդացեք, այլ ոչ թե ուղղակի կարդալու մի բան: Պատմություն և գրականություն ուսումնասիրեք: Մտավորական մարդը պետք է լավ իմանա թե՛ մեկը, թե՛ մյուսը: Հենց դրանք են մարդուն բարոյական և գեղագիտական մտահորիզոն տալիս, շրջապատող աշխարհը դարձնում մեծ, հետաքրքիր, փորձ և ուրախություն ճառագող: Եթե որևէ առարկայում ձեզ ինչ-որ բան դուր չի գալիս, լարվեք և փորձեք դրա ուրախության աղբյուրը գտնել՝ նորը ձեռք բերելու ուրախության:



Սովորե՛ք սիրել սովորելը:

Քսանյութերորդ նամակ Չորրորդ չափումը

Հիշողությունը և անցյալի իմացությունը աշխարհը լցնում են, հետաքրքիր, կարևոր, ոգեշունչ դարձնում: Եթե ձեզ շրջապատող աշխարհի ետևում նրա անցյալը չեք տեսնում, նա ձեզ համար դատարկ է: Ձեզ համար ձանձրալի է, տխուր, և վերջին հաշվով դուք միայնակ եք, քանի որ ընկերներն էլ իսկական ընկեր են, երբ ձեզ ինչ-որ ընդհանուր անցյալ է կապում՝ կա՛մ դպրոց, ինստիտուտ եք ավարտել, կա՛մ միասին եք աշխատել, իսկ ծերերը հատուկ քնքշությամբ հիշում են նրանց, ում հետ մարտնչել են, ինչ-որ դժվարություն հաղթահարել:

Թող շենքերը, որոնց մոտով անցնում ենք, քաղաքները և գյուղերը, որոնցում ապրում ենք, նույնիսկ գործարանները, որտեղ աշխատում ենք, կամ նավերը, որոնցով ճամփորդում ենք, մեզ համար կենդանի, այսինքն՝ անցյալ ունեցող լինեն: Կյանքը գոյության պահի կարճատևությունը չէ:

Իմանանք պատմությունը, այն ամենի պատմությունը, ինչ մեզ շրջապատում է՝ մեծ թե փոքր մասշտաբներով: Չէ՞ որ դա աշխարհի չորրորդ, շատ կարևոր չափումն է:

Բայց մեզ շրջապատող ամեն ինչի պատմությունը՝ սկսած մեր ընտանիքից, շարունակելով գյուղով, քաղաքով, մինչև երկիրն ու աշխարհը, ոչ միայն պիտի իմանանք, այլ պետք է պահպանենք այդ պատմությունը, շրջապատող աշխարհի այդ անտակ խորությունը:

Ուշադրությո՛ւն դարձրեք. երեխաներն ու երիտասարդները հատկապես սիրում են սովորույթները, ավանդական տոնակատարությունները: Քանի որ յուրացնում են աշխարհը, յուրացնում են այն ավանդույթներով և պատմությամբ: Ակտիվորեն պաշտպանենք այն ամենը, որ մեր կյանքն իմաստալից, հարուստ, ոգեղեն է դարձնում:

Քսանյութերորդ նամակ Միասին լինել

Ինձ հաճախ են հարցնում, թե առօրյայից ռուսական խաղերը՝ «լապտա», «գորելկի», «գորողկի» կամ «րյուլսի»³, ինչու են անհետանում:

³ Ռուսական ազգային խաղեր: ru.wikipedia.org/wiki/ հասցեում դրանց մասին տեղեկություններ կարող եք գտնել:



Բարդ հարց է: Ոչ միայն ռուսական խաղերն են անհետանում, անհետանում են խաղերն ընդհանրապես: Դրանք փոխարինվում են պարերով, կամ պար կոչվածներով: Ընդ որում դաստիարակչական նկատառումներով խաղերը շատ կարևոր են: Խաղը, դա կլինի լապտա, վոլեյբոլ, գորելկի թե ուրիշ մի խաղ, համայնություն, միասին լինելու, միասին խաղալու, ընկերոջը և հակառակորդին զգալու կարողություն են դաստիարակում: Դա՛ խաղը, շատ կարևոր դաստիազակչական բան է: Մեր կյանքում խաղերը պետք է վերածնվեն: Քանի որ չեմ հանդիպում արդեն, որ, օրինակ, կրոկետ խաղան: Իսկ կրոկետը կարևոր խաղ է, քանի որ և՛ մեծերը, և՛ փոքրերն են խաղում, դա մեծերի ու փոքրերի շփումն է: Դա կարևոր է: Տանը զբաղվում են հեռուստացույց նայելով: Այ, այստեղ հեռուստացույցը, պարզվում է, լուրջ հակառակորդ է: Իսկ առաջ թվային լոտո էին խաղում, խաղում էին փոքրերը, խաղում էին մեծերը, և դա մեծերի ու փոքրերի շփմանն էր ծառայում, դաստիարակչական առումով շատ կարևոր պահերից էր: Բայց միայն լոտոն չէր, շատ խաղեր կային, որ մեծերն ու փոքրերը միասին էին խաղում: Ճիշտ այնպես, ասենք, ինչպես հյուսիսում ինչ-որ տեղ ամբողջ ընտանիքը ժողովրդական երգչախմբերի փառատոնի էր մասնացում: Սա կարևոր է, քանի որ երգչախումբը ոչ միայն գեղագիտական հաճույք է պատճառում, այն ընտանիքը բարոյապես կազմակերպում է, բարոյապես կազմակերպում է ինչ-որ գյուղում ձմռանը, ձնաբքին հավաքված համայնքը: Երգում և այս ձևով մարդիկ հաղորդակցվում են իրար հետ, շփվում են: Իսկ որքան քիչ են մարդկային շփումները մեզ մոտ: Դրանք շատ կարևոր են, անմիջական շփումները, ինչ-որ ենթագիտակցական շփումները, որոնք խաղում, երգչախմբային երգեցողության, երաժշտության մեջ են ձևավորվում: Այս պատճառով էլ մանկավարժական հաստատությունները պետք է ուշադրություն դարձնեն մեր կենցաղի այս կողմին, նրան, որ մեզանում անհետանում են խաղերը: Իսկ մեր ֆիզկուլտուրայի դասերը չդարձնե՞նք խաղային: Սա միանգամից և՛ ֆիզիկական, և՛ բարոյական զարագացում կապահովի, և՛ դասարանը կմիավորի:

Քսանիններիդ նամակ Ճանապարհորդե՛ք

Կյանքի ամենամեծ արժեքներից մեկը սեփական երկրով և ուրիշ երկրներով ճանապարհորդելն է: Ընդ որում զգուշացեք ուղևորությունները՝ հետաքրքիրի և անհետաքրքիրի, իսկ վայրերը, ուր այցելել եք, կարևորի և ոչ կարևորի բաժանելուց: Նույնիսկ ձեր այցելած վայրերի կարևորության աստիճանը աշխատեք չորոշել: Ճանապարհորդությունները բաժանեք այսպես՝ դրանց պատրաստվել էիք, և չէիք պատրաստվել կամ վատ էիք պատրաստվել: Ցանկացած քաղաք, ցանկացած երկիր, ցանկացած վայր, որտեղ ուղևորվելուն չէիք պատրաստվել, անհետաքրքիր ու ձանձրալի են: Եվ հակառակը, եթե գիտեք այդ վայրի պատմությունը, այն տասն անգամ ավելի հետաքրքիր է դառնում:



Ի՞նչ է նշանակում պատրաստվել ուղևորվելու անձանոթ քաղաք, որտեղ դեռևս չեք եղել: Նշանակում է ուսումնասիրել նրա պատմությունը, հատակագիծը, թեկուզ տուրիստական քարտեզներով, նախօրոք քարտեզի վրա նշել այն վայրերը, ուր պետք է այցելեք և մոտավոր երթուղիները, որպեսզի իզուր ժամանակ չվատնեք: Առիթը բաց մի՛ թողեք հետաքրքիր բան գտնելու նույնիսկ այնտեղ, որտեղ լինելը անհետաքրքիր է թվում: Երկրի վրա անհետաքրքիր տեղեր չկան. կան միայն չհետաքրքրվող մարդիկ, հետաքրքիրը գտնել չկարողացող, ներքուստ ձանձրալի մարդիկ:

Ինձ համար միշտ տհաճ են այն մարդիկ, որ իրենց համար նոր վայրեր այցելելով՝ ձածրացողի տեսքով ասում են ուղեկիցներին. «Ա՛յ, որ Փարիզում էի... այնտեղ...»: Պետք է կարողանաք խորասուզվել այն վայրի մթնոլորտում, ուր ճակատագիրը գցել է ձեզ, և ամեն տեղ կարողանալ գտնել սեփականը, բնորոշը: Այդ կարողությունը, իհարկե, միայն վերացական ցանկությամբ չի տրվում, այլ նաև գիտելիքներով: Եվ հատկապես կարևոր են մինչև ճամփորդությունը ձեռք բերած գիտելիքները:

Նկարիչների տպավորությունները միշտ են հետաքրքիր: Իրենց կատարած ճանապարհորդությունների մասին նկարիչների գրառումները և հիշողությունները կարդացեք: Չգիտեմ՝ ինչից է, բայց բոլոր նկարիչները զարմանալիորեն լավ են գրում: Հիանալի գրողներ են Կորովինը, Բենուան, Դաբուժինսկին, Գրաբարը...

Ինչպե՞ս են կարողանում նայել ու տեսնել, իսկ հետո տեսածը պատկերել ոչ միայն բնանկարում, այլ նաև իրենց գրառումներում:

Մ. Վ. Դոբուժինսկին իր հիշողություններում գրում է, թե երիտասարդ ժամանակ իր վրա առաջին անգամ այցելելիս ի՛նչ մեծ տպավորություն են թողել Մյունխենը, Վենետիկը և Փարիզը: Ռուսաստան նա ստիպված է եղել վերադառնալ հանկարծակի (արտասահմանում անսպասելիորեն վախճանվել է Դոբուժինսկիների կրտսեր որդին, որին ծնողները որոշել են հայրենի Վիլնյուսում թաղել): Եվ ահա, Մյունխենից, Փարիզից, Վենետիկից հետո նա հայտնվում է լիտվական փոքրիկ գերեզմանոցում: Եվ ահա, թե ինչ է գրում. «Նեմանի ուղղությամբ կամ դաշտերի երկայնքով կնոջս հետ հաճախ էինք մոտոցիկլետով գնում խճուղով կամ անտառով, և նորից տեսնում էի լիտվական տխուր ու հարազատ բնապատկերը՝ ավազոտ դաշտեր, և նրանց մեջ, որպես կանաչ օազիսներ՝ ռոմանտիկական գերեզմանոցները՝ բարձր խաչերով ու կեչիներով, և աշնանային գորշ երկինքը՝ դանդաղ թռչող միայնակ ագռավով:

Այդ գերեզմանոցները, լիտվական փորագրված խաչերը, հորիզոնի անտառը և Օլիտու աղքատիկ վայրը, որտեղ փոքրիկ կարմիր փայտե մատուռ կար, ես գիտեի ու սիրում էի մինչև Մյունխեն գնալս, բայց հիմա՝ այն ամենից հետո, ինչ տեսել եմ



արտասահմանում, այս անկյունն ինձ չափազանց ինքնատիպ թվաց:

Մենք եղանք Վիլնոյում, և իմ սիրելի քաղաքը նորից ինձ հմայեց: Հետագայում էլ, երբ արտասահման կատարած իմ յուրաքանչյուր ճանապարհորդությունից հետո Պետերբուրգ գնալիս Վիլնո էի մտնում, իր հիասքանչ, ճոխ բարոկոյով նա համեմատական քննությանը միշտ գերազանց էր դիմանում»:

Ահա իսկապես մտավորական մարդու՝ ուղևորությունների և ճանապարհորդությունների իսկական արդյունքը. ներքուստ հարուստ մարդու համար ամբողջ շրջակա աշխարհը անսահման հարուստ է:

Եվ երկրորդ՝ ուղևորությունները նստակեցություն են դաստիարակում, բարոյական նստակեցություն, սեր հարազատի նկատմամբ:

Երբ հաջողվի նոր քաղաքում լինել, մշակութային հայտնի ստեղծագործություններ կամ հայտնի տեսարաններ դիտել, մի՛ տրվեք այն ամենին, ինչ դրանց մասին լսել, կարդացել եք, ինչի մասին ձեր «ականջը տարել» են: Ձեր կարդացածից շատ բան կօգնի, որ հասկանաք ու գնահատեք տեսածը, բայց մասամբ էլ կարող է խանգարել ձեր սեփական, անհատական տպավորությունը կազմելուն: Սեփականը գնահատեք, բայց գնահատեք անկեղծորեն և մի՛ ջանացեք ընդհանուր կարծիքին ամեն գնով հակառակվել (հաճախ այդպիսի բան էլ է հանդիպում սրված ինքնասիրությամբ մարդկանց մոտ):

Օրինակ բերեմ իմ սեփական տպավորություններից (այդ տպավորությունների հետ կարող եք համաձայնել, կարող եք՝ ոչ): Ես հին պետերբուրգցի-լենինգրադցի եմ: Ծնվել եմ Պետերբուրգում, և այնտեղ են ծնվել իմ ծնողները, նրանց ծնողները: XVIII դարից իմ նախնիներն ապրել են Պետերբուրգում:

Ինձ մանկուց մշտապես ներշնչել են, թե որքան գեղեցիկ է Նևան: Ինչ հանդիսավոր է Նևայի միջնամասը, Նևայի վրայով լադոգյան սառույցների ընթացքն ինչքան հանդիսավոր է, քաղաքին ինչ շքեղություն է տալիս Պետրոպավլովյան ամրոցի սայրը, ավանդական կեսօրյա, ուղիղ ժամը 12-ի թնդանոթային զարկը Պետրոպավլովյան ամրոցից որքա՛ն գեղեցիկ է:

Ոչ ոք չի վիճում, որ Նևայի միջնամասն իր ամենալայն հատվածում գեղեցիկ է: Բայց այդ միջնամասը չգիտես ինչու ինձ թախիժ է ներշնչում: Դա ամենատխուր և թախծալի տեղերից մեկն է, որ տեսել եմ իմ քաղաքում, հատկապես երբ Ձմեռային ջրանցքից նայում ես Պետրոպավլովյան ամրոցին: Մարդու սիրտը ճմլվում է թախիժից... Հնարավոր է, դեռ մանկուց եմ լսել ամրոցի կալանավորների մասին, և ինձ վրա առանձնահատուկ տպավորություն է թողել իշխանուհի Տարականովայի մասին լեգենդը, որ իր խցում խեղդվել է ներս հորդած ջրհեղեղից: Չգիտեմ: Եվ



Իմ մեջ աշխարհում ամենագեղեցիկ սառցաղնթացքը գոյություն ունեցող ամեն ինչի անցավորության թեմայի հետ է զուգակցվում:

Իսկ որքա՛ն գեղեցիկ են Լենինգրադում ավելի գողտրիկ անկյունները՝ հատկապես ջրանցքները:

Ինչը կարող է ավելի գեղեցիկ լինել, քան այն զարմանալի անկյունները, որ բացվում են, երբ քայլում ես Մոյկայով (օրինակ՝ Պուշկինի վերջին բնակարանի մոտ), Գրիբոյեդովի ջրանցքով (հատկապես արծվառյուծի քանդակներով կամրջակի մոտ), Կրյուկովի ջրանցքով (հիշեք «Ծովի Նիկոլայի» մոտ Չևակինսկու կառուցած զանգակատունը), Ֆանտանկայով: Լենինգրադում ամենագեղեցիկ տեղերից մեկը Նոր Հոլանդիան է և հատկապես նրա Դելմոտի դարպասները, որը ներս է թողնում այն ջրանցքը, որով բեռներ են տանում պահեստները: Հատկապես Գրիբոյեդովի ջրանցքն են սիրում, որտեղ փողոցների խիստ գծագրության մեջ լատինական «S» տառի նման գալար է անում. առաջ ես նայում՝ ջրանցքն է երկնքով անցնող հիանալի կամրջակով: Հետ ես նայում՝ նորից նույն ջրանցքն է: Ջրանցքը կենդանություն և անկարգություն է հաղորդում փողոցների միօրինակ կարգին, և պատահական չէ, որ Դոստոյևսկին իր «Ոճիր և պատիժ» վեպի համար գործողությունների վայր ընտրել է հենց այս փողոցները: Ռասկոլնիկովի դատողությունները թվացյալ կարգավորում են կյանքը, իսկ իրականում այն իր օրենքներով է ընթանում: Ջրանցքում ջուրը հոսում է, ինչպես կյանքն է հոսում: Ջրանցքը, կամ առուն, ինչպես Դոստոյևսկին էր անվանում, «քշել քանդել է» փողոցների խիստ և կոպիտ միօրինակ գծագրությունը: Ծայրից ծայր անցեք Գրիբոյեդովի ջրանցքի երկայնքով, Մոյկայով, Պրուշտեյնի ջրանցքով...

Իսկ Մոսկվայում քայլեք ամբողջ հին Արբատով, Սիվցև Վրաժեկով, Կրոպոտկինի փողոցով:

Քաղաքը մտորումների է մղում: Մտորումների է մղում Օրյոլը, հատկապես այն մասում, որտեղ տեղի են ունեցել Տուրգենևի «Արքունական բնի» գործողությունները, կամ Օրիկ գետը, որի վրա ապրել է Ն. Ս. Լեսկովի հիասքանչ ստեղծագործության՝ «Անմահ Գոլովանի» հերոսը: Իսկ Վոլգայի քաղաքների՝ Ույանովսկի, Յարոսլավլի, Կոտորոմայի, Գորկիի հայտնի բուլվարները... Արդյո՞ք դրանք չեն ստիպում մեզ մտածել Օստրովսկու, Գորկու, Գոնչարովի հետ:

Ճանապարհորդությունները շատ բան են մեր առջև բացում, շատ բանի մասին են ստիպում մտածել, երազել:

Երեսուներորդ նամակ

Բարոյական բարձունքները և դրանց նկատմամբ վերաբերմունքը

Ահա թե ինչի մասին են ցանկանում խոսել: «Գրառումներ ռուսականի մասին»-ում և



«Երկխոսություններ երեկվա, այսօրվա և վաղվա մասին»-ում ես արդեն ուշադրություն եմ դարձրել ռուս ժողովրդի բնավորության մի քանի գծերին, որոնց վերջին ժամանակներս ընդունված չէ ուշադրություն դարձնել՝ բարություն, պարզություն, համբերություն, ազգային սնապարծության բացակայություն և այլն: Ընթերցողն իրավունք ունի հարցնելու, թե «Գրառումներում» ո՞ր եմ կորել ռուս մարդու բացասական գծերը: Արդյո՞ք ռուսներին միայն դրական գծերն են բնորոշ, իսկ մյուս ժողովուրդները զուրկ են դրանցից: Վերջին հարցի պատասխանը ընթերցողը ցանկության դեպքում կարող է հենց «Գրառումներում» գտնել. ես այնտեղ ոչ միայն ռուս ժողովրդի մասին եմ խոսում: Ինչ վերաբերում է առաջին հարցին՝ ռուսների թերությունների մասին, ապա ես ամենևին չեմ համարում ռուս ժողովրդին դրանցից զուրկ. հակառակը դրանցից նա շատ ունի, բայց...

Ժողովրդին կարո՞ղ ենք նրա թերություններով բնութագրել: Չէ՞ որ երբ մշակույթի պատմություն է գրվում, ընդգրկում են միայն բարձրագույն նվաճումները, լավագույն ստեղծագործությունները: Միջակ կամ վատ ստեղծագործություններով չի կարելի գեղանկարչության կամ գրականության պատմություն կառուցել: Եթե ցանկանում ենք որևէ քաղաքի մասին պատկերացում կազմել, սկզբում ծանոթանում ենք նրա լավագույն շենքերին, հրապարակներին, հուշարձաններին, փողոցներին, լավագույն տեսարաններին, «քաղաքային բնապատկերներին»: Ուրիշ հարց է, երբ ծանոթանում ենք առանձին մարդկանց՝ նրանց բարոյական կամ բժշկական կողմերի հետ: Չէ՞ որ խոսում ենք ժողովրդի մասին պատկերացումների մասին:

Ժողովուրդը մշակույթի ստեղծագործության նման է. սա է իմ մոտեցումը «Գրառումներում» ցանկացած ժողովրդի նկատմամբ:

Յուրաքանչյուր ժողովրդի մասին պետք է դատել այն բարոյական բարձունքներով և այն իդեալներով, որոնցով նա ապրում է: Բարյացակամություն յուրաքանչյուր ժողովրդի, ամենափոքրաքանակի նկատմամբ: Այս դիրքորոշումն ամենաճիշտն է, ամենաազնիվը:

Ընդհանրապես, ցանկացած անբարյացակամություն միշտ անընկալելիության պատ է բարձրացնում:

Բարյացակամությունը, հակառակը, բացում է ճիշտ ընկալման ճանապարհները:

Ինքնաթիռը գետնին չի ընկնում ոչ թե այն պատճառով, որ թևերով «հենում է օդին», այլ որ ներձծվում է վերևի, երկնքի մեջ... Ժողովրդի մեջ ամենակարևորը նրա իդեալներն են:

Երեսունմեկերորդ նամակ Բարոյական նստակեցության շրջանակը

Ինչպե՞ս ինքդ քո և ուրիշների մեջ դաստիարակես «բարոյական նստակեցություն»՝ կապվածություն սեփական ընտանիքին, տանը, գյուղին, քաղաքին, երկրին:



Կարծում եմ, որ դա ոչ միայն դպրոցի և երիտասարդական կազմակերպությունների գործն է, այլ նաև ընտանիքի:

Տանը և ընտանիքին կապվածությունը ոչ թե դիտավորությամբ, դասախոսություններով ու հրահանգներով է ստեղծվում, այլ ամենից առաջ այն մթնոլորտով, որը տիրում է տանը: Եթե ընտանիքում կան ընդհանուր հետաքրքրություններ, ընդհանուր զվարճանքներ, ընդհանուր հանգիստ, ապա դա արդեն բավականին շատ է: Դե, իսկ եթե տանը ժամանակ առ ժամանակ նայում են ընտանեկան այբոմները, խնամում հարազատների շիրիմները, պատմում, թե ինչպես են ապրել նախապապերն ու նախատատերը, ապա դա կրկնակի շատ է:

Համարյա յուսքանչյուր քաղաքաբնակի նախնիներից գոնե մեկը եկած է լինում մոտակա կամ հեռավոր գյուղից, և այդ գյուղն էլ պետք է հարազատ մնա: Թեկուզ երբեմն, բայց պետք է այնտեղ գնալ ամբողջ ընտանիքով, հոգ տանել անցյալի հիշողությունները պահպանելու համար և ուրախանալ ներկայի հաջողություններով: Իսկ եթե հարազատ գյուղ կամ գյուղեր չկան, ապա համատեղ շրջագայությունները երկրով ավելի խորն են տպավորվում, քան անհատականները: Տեսնել, լսել, հիշել, և այս ամենը մարդկանց նկատմամբ սիրով. որքա՛ն կարևոր է սա: Բարին նկատելը այնքան էլ հեշտ գործ չէ: Չի կարելի մարդկանց միայն մտքի և մտավորականության համար գնահատել. նրանց գնահատեք իրենց բարության, աշխատանքի համար, այն բանի համար, որ իրենց շրջապատի ներկայացուցիչն են՝ համագյուղացիներ են կամ համադասարանցիներ, համաքաղաքացիներ են կամ ուղղակի ինչ որ բանում «յուրային են», «հատուկ»:

Բարոյական նստակեցության շրջանակը շատ լայն է:

Հատուկ ուշադրություն են ցանկանում դարձնել մեկին՝ գերեզմանների և գերեզմանոցների նկատմամբ մեր վերաբերմունքին:

Շատ հաճախ քաղաքաշինարար-ճարտարապետներին զայրացնում է այն հանգամանքը, որ քաղաքի տարածքում գերեզմանոց կա: Նրանք ցանկանում են այն վերացնել, վերածել այգու, այնինչ գերեզմանոցը քաղաքի տարր է, քաղաքային ճարտարապետության ինքնատիպ և շատ կարևոր տարր:

Գերեզմանները սիրով են արվել: Շիրմաքարերը մարմնավորել են հանգուցյալների հանդեպ երախտագիտությունը, նրանց մասին հիշողությունը հավերժացնելու ձգտումը: Այդ պատճառով էլ դրանք այդքան տարբեր են, անհատական և միշտ յուրովի հետաքրքիր: Կարդալով մոռացված անուններ, երբեմն այնտեղ փնտրելով թաղված հայտնի մարդկանց, հարազատների կամ ուղղակի ծանոթների՝ այցելուները ինչ-որ չափով սովորում են «կյանքի իմաստությունը»: Շատ գերեզմանատներ յուրովի բանաստեղծական են: Այդ պատճառով էլ միայնակ



շիրիմների կամ գերեզմանոցների դերը «բարոյական նսատելության» դաստիարակման գործում շատ մեծ է:

Երեսուներկուերորդ նամակ

Արվեստը հասկանալ

Եվ այսպես, կյանքն ամենամեծ արժեքն է, որ մարդ ունի: Եթե կյանքը համեմատենք թանկարժեք պալատի հետ՝ բազում դահլիճներով, որոնք ձգվում են անվերջանալի սենեկաշարքերով, որոնք բոլորը շքեղորեն տարբեր են, և մեկը մյուսին նման չէ, ապա այդ պալատում ամենամեծ դահլիճը, իսկական «գահադահլիճը», այն դահլիճն է, որտեղ արվեստն է թագավորում: Դա զարմանալի կախարդանքների դահլիճ է: Եվ առաջին կախարդանքը, որը նա կատարում է, տեղի է ունենում ոչ միայն պալատի տիրոջ, այլ նաև հանդիսության բոլոր հրավիրյալների հետ:

Դա անվերջանալի տոնակատարությունների դահլիճ է, որոնք մարդու կյանքը դարձնում են ավելի հետաքրքիր, հանդիսավոր, ուրախ, արժեքավոր... Չգիտեմ՝ էլ ինչ մակդիրներով արտահայտեմ իմ հիացմունքն արվեստի հանդեպ, նրա ստեղծագործությունների հանդեպ, այն դերի հանդեպ, որն ունի նա մարդկության կյանքում: Եվ ամենամեծ արժեքը, որով արվեստը պարզևատրում է մարդուն, բարության արժեքն է: Արվեստը հասկանալու շնորհով պարզևատրված մարդը դառնում է բարոյապես ավելի լավը, հետևաբար, նաև ավելի երջանիկ: Այո՛, ավելի երջանիկ: Քանի որ արվեստի միջոցով աշխարհը, շրջապատող մարդկանց, անցյալը և հեռավորը բարությանը ընկալելու շնորհով պարզևատրված մարդը հեշտությամբ է ընկերանում ուրիշ մարդկանց հետ, ուրիշ մշակույթների հետ, ուրիշ ազգությունների հետ, նրա համար հեշտ է լինում ապրելը:

Ե. Ա. Մայմինը ավագ դասարանների սովորողներին ուղղված «Արվեստը մտածում է պատկերներով» գրքում գրում է. «Հայտնագործությունները, որոնք արվեստի միջոցով ենք կատարում, ոչ միայն կենդանի և տպավորիչ, այլ նաև բարի հայտնագործություններ են: Իրականության՝ արվեստի միջոցով ստացվող իմացումը մարդկային զգացմունքով, կարեկցանքով ջերմացած գիտելիք է: Արվեստի այս հատկությունն է նրան դարձնում անասելի բարոյական նշանակություն ունեցող հասարակական երևույթ: Գոգոլը թատրոնի մասին գրել է. «Դա մի ամբիոն է, որտեղից կարելի է աշխարհին բարի շատ բան ասել»: Ցանկացած իսկական արվեստ բարության աղբյուր է: Նա հենց իր հիմքում բարոյական է, քանի որ ընթերցողի, հանդիսատեսի, բոլոր նրանց մեջ, ովքեր ընկալում են, առաջ է բերում կարեկցություն և ապրումակցություն մարդկանց, ամբողջ մարդկության նկատմամբ: Лев Лև Տոլստոյը խոսել է արվեստի «միավորող ակունքի» մասին և այդ հատկությանն առաջնային նշանակություն է տվել: Իր պատկերային ձևի շնորհիվ արվեստը լավագույնս միավորում է մարդուն մարդկությանը.



ստիպում է ավելի մեծ ուշադրությամբ և ըմբռնումով վերաբերվել ուրիշի ցավին, ուրիշի ուրախությանը: Ուրիշի այդ ցավն ու ուրախությունը զգալի չափով դարձնում է քոնը... Արվեստը մարդկային է այս բառի ամենխորը իմաստով: Նա մարդուց է գալիս և տանում է դեպի մարդը՝ դեպի նրա ունեցած ամենակենդանին, բարին, ամենալավը: Նա մարդկային հոգիների միավորմանն է ծառայում»: Լավ, շա՛տ լավ է ավաճ: Եվ այստեղ շատ մտքեր հնչում են, որպես հրաշալի աֆորիզմներ:

Հարստությունները, որ արվեստի ստեղծագործությունների ընկալումն է ընձեռում մարդուն, չի կարելի նրանից խլել. իսկ դրանք ամենուր են, պետք է միայն նկատել:

Իսկ չարությունը մարդու մեջ միշտ կապված է ուրիշին չհասկանալու, նախանձի տանջալից զգացողության, էլ ավելի տանջալից անբարյացակամության զգացողության, հասարակության մեջ սեփական տեղով չբավարարվելու, հավերժական, մարդուն ուտող ոխի, կյանքից հիասթափության հետ: Չար մարդն իրեն պատժում է իր չարությամբ: Նա նախ և առաջ ինքն իրեն է թաղում խավարում:

Արվեստը լուսավորում է և միաժամանակ լուսավորում է մարդու կյանքը: Եվ կրկնում են՝ մարդուն դարձնում է ավելի բարի և, հետևաբար, ավելի երջանիկ: Բայց արվեստի ստեղծագործությունը հասկանալն այնքան էլ դյուրին չէ: Դա պետք է սովորել՝ սովորել երկար, ամբողջ կյանքում: Քանի որ արվեստի սեփական ընկալման ընդլայնումը չի կարող ընդհատում ունենալ: Կարող է միայն նահանջ լինել՝ դեպի անհասկացության խավարը: Չէ՞ որ արվեստը մեզ միշտ հանդիպեցնում է նորանոր երևույթների հետ, և սա է արվեստի մեծագույն շոայլությունը: Պալատում արդեն մեր առջև բացվել են որոշ դռներ, հետո մյուսների բացվելու հերթն է:

Իսկ ինչպե՞ս սովորենք արվեստը հասկանալ: Ինչպե՞ս մեր մեջ կատարելագործենք այդ ընկալումը: Դրա համար ինչպիսի՞ հատկություններով պետք է օժտված լինել:

Չեմ պատրաստվում դեղատոմսեր առաջարկել: Ոչինչ կտրուկ չեմ ուզում պնդել: Բայց այն հատկությունը, որն արվեստի իսկական ընկալման համար ինձ այնուամենայնիվ ավելի կարևոր է թվում, անկեղծությունն է, ազնվությունը, արվեստն ընկալելու համար բացությունը:

Մարդն արվեստի ընկալում պետք է սովորի ամենից առաջ ինքն իրենից՝ սեփական անկեղծությունից:

Հաճախ ինչ-որ մեկի մասին ասում են՝ բնածին ճաշակ ունի: Ամենևին՝ Եթե հետևեք այն մարդկանց, ում մասին կարելի է ասել, որ ճաշակ ունեն, ապա նրանց բոլորին հատուկ մի ընդհանուր գիծ կնկատեք. նրանք ազնիվ և անկեղծ են իրենց ընկալման մեջ: Շատ բան նրանք հենց դրանից են սովորել:



Երբեք չեմ նկատել, որ ճաշակը ժառանգաբար փոխանցվի:
Կարծում եմ, որ ճաշակն այն հատկությունների մեջ չէ, որոնք գենետիկ փոխանցվում են: Չնայած ընտանիքը ճաշակ դաստիարակում է, և ընտանիքից, նրա ինտելիգենտությունից շատ բան է կախված:

Արվեստի ստեղծագործությանը չի կարելի կանխակալ մոտենալ՝ ընդունված «կարծիքից», նորաձևությունից, ընկերների կարծիքից ելնելով կամ չկամեցողների հայացքներից վանվելով: Արվեստի ստեղծագործության հետ պետք է կարողանալ «դեմառդեմ» մնալ:

Եթե արվեստի ստեղծագործություններ ընկալելիս սկսեք հետևել նորաձևությանը, ուրիշների կարծիքին, նրբաճաշակ և «նրբագեղ» երևալու ձգտմանը, ձեր մեջ կխեղդեք այն ուրախությունը, որը կյանքն արվեստին է պարգևում, իսկ արվեստը՝ կյանքին:

Ձևացնելով, թե հասկանում եք այն, ինչը չեք հասկանում, ոչ թե ուրիշին, այլ հենց ձեզ եք խաբում: Փորձում եք ինքներդ ձեզ էլ համոզել, որ ինչ-որ բան հասկացել եք, բայց ուրախությունը, որ արվեստն է պարգևում, անմիջական է, ինչպես և ցանկացած ուրախություն:

Դուր է գալիս՝ այդպես էլ ասեք ձեզ և ուրիշներին, որ դուր է գալիս: Միայն թե ձեր ընկալումը, իսկ որ ավելի վատ է՝ թյուրընկալումը, մի՛ պարտադրեք ուրիշներին: Մի՛ կարծեք, թե բացարձակ ճաշակով կամ էլ բացարձակ գիտելիքով եք օժտված: Առաջինն անհանար է արվեստի, երկրորդը՝ գիտության մեջ: Ձեր և ուրիշների մեջ հարգեք սեփական վերաբերմունքը արվեստի նկատմամբ և հիշեք իմաստուն կանոնը՝ ճաշակին ընկեր չկա:

Մի՛ թե սա նշանակում է, որ պետք է մարդ ամբողջովին ամփոփվի իր մեջ և բավարարվի իրենով, արվեստի այս կամ այն ստեղծագործության մասին իր վերաբերմունքով: «Ինձ սա դուր է գալիս, իսկ սա՝ ոչ, և վերջ»: Ո՛չ մի դեպքում:

Արվեստի ստեղծագործությունների սեփական ընկալման նկատմամբ չի կարելի հանգիստ լինել, պետք է ձգտես հասկանալ այն, ինչ չես հասկացել, և խորացնել այն բանի ընկալումը, ինչը մասնակի ես ընկալել: Իսկ արվեստի ստեղծագործության ընկալումը միշտ էլ լրիվ չէ: Քանի որ իսկական արվեստի ստեղծագործությունն «անսպառ» հարստություններ ունի:

Ինչպես արդեն ասացի, չի կարելի հենվել ուրիշների կարծիքների վրա, բայց մյուսների կարծիքը պետք է լսել, հաշվի առնել: Եթե ուրիշների կարծիքն արվեստի ստեղծագործության մասին բացասական է, ապա դա մեծ մասամբ անհետաքրքիր է:
Ավելի հետաքրքիր է մյուսը՝ երբ շատերի կողմից արտահայտվում է դրական



հայացք: Եթե որևէ նկարչի, որևէ նկարչական դպրոց ընկալում են հազարները, ապա շատ հավակնոտ կլինեք պնդել, թե միայն դուք եք ճիշտ:

Իհարկե, ճաշակին ընկեր չկա, բայց ճաշակը զարգացնում են, և՛ սեփականը, և՛ ուրիշներինը: Կարելի է ձգտել հասկանալ այն, ինչ հասկանում են ուրիշները, հատկապես, եթե այդ ուրիշները շատ են: Չէ՞ որ շատ ու շատերը չեն կարող ուղղակի խաբեբաներ լինել, եթե պնդում են, որ ինչ-որ բան իրենց դուր է գալիս, եթե գեղանկարիչը կամ երաժշտահանը, բանաստեղծը կամ քանդակագործը հսկայական կամ նույնիսկ համաշխարհային ճանաչում ունեն: Ի դեպ, լինում են մոդաներ, և լինում են նորի կամ ուրիշինի միանգամայն անհիմն մերժում, «ուրիշինի», շատ բարդի նկատմամբ նույնիսկ ատելության վարակ, և այլն:

Ամբողջ հարցն այն է միայն, որ առանց ընկալելու ավելի պարզը՝ միանգամից չես կարող ընկալել բարդը: Ցանկացած ընկալման ժամանակ՝ գիտական թե գեղարվեստական, չի կարելի թռչել աստիճանների վրայով: Դասական երաժշտություն հասկանալու համար պետք է պատրաստված լինել երաժշտական արվեստի հիմունքների իմացությամբ: Նույնը՝ գեղանկարչության կամ պոեզիայի դեպքում: Չի կարելի տիրապետել բարձարագույն մաթեմատիկային՝ առանց իմանալու տարրականը:

Արվեստի նկատմամբ անկեղծությունն առաջին պայմանն է այն ընկալելու, բայց առաջին պայմանը դեռ ամբողջը չէ: Արվեստն ընկալելու համար նաև գիտելիքներ են պետք: Արվեստի պատմության, հուշարձանի պատմության, այն ստեղծողի կենսագրության փաստական տվյալներն օգնում են արվեստի գեղագիտական ընկալմանը՝ նրան ազատ թողնելով: Դրանք ընթերցողին, հանդիսատեսին կամ ունկնդրին արվեստի ստեղծագործության նկատմամբ որոշակի գնահատական կամ որոշակի վերաբերմունք չեն պարտադրում, այլ, կարծես «մեկնաբանելով», հեշտացնում են ընկալումը:

Փաստացի տվյալներն ամենից առաջ պետք են նրա համար, որ արվեստի ստեղծագործության ընկալումն իրականանա պատմական հեռանկարում, ներծծված լինի պատմականությամբ, քանի որ ստեղծագործության նկատմամբ գեղագիտական վերաբերմունքը միշտ էլ նաև պատմական է: Եթե մեր առջև ժամանակակից հուշարձան է, ապա ներկա ժամանակն էլ որոշակի պահ է պատմության մեջ, և պետք է իմանանք, որ հուշարձանն ստեղծվել է մեր օրերում: Եթե գիտենք, որ հուշարձանն ստեղծվել է Հին Եգիպտոսում, դա պատմական վերաբերմունք է առաջացնում, օգնում այն ընկալելուն: Իսկ հինեգիպտական արվեստն ավելի սուր ընկալելու համար պետք կգա իմանալ նաև, թե Հին Եգիպտոսի պատմության որ շրջանում է ստեղծվել այս կամ այն հուշարձանը:

Գիտելիքները մեր առջև դռներ են բացում, բայց դրանցով ինքներս պետք է



անցնենք: Եվ հատկապես ցանկանում են շեշտել մանրուքների նշանակությունը: Երբեմն մանրուքն է մեզ գլխավորի մեջ թափանցելու հնարավորություն տալիս: Որքա՛ն կարևոր է իմանալ, թե ինչի համար է գրվել կամ նկարվել այս կամ այն բանը:

Մի անգամ Էրմիտաժում VIII դարի վերջում և XIX դարի սկզբում Ռուսաստանում աշխատած, բեմանկարիչ և Պավլովյան այգիների շինարար Պյոտր Գոնզագոյի ցուցահանդեսն էր: Հատկապես ճարտարապետական սյուժեներով նրա նկարները շքանկար էին հեռանկարի կառուցման գեղեցկությամբ: Նա նույնիսկ պարծենում է իր վարպետությանը՝ ընդգծելով իրականում հորիզոնական, իսկ նկարներում հորիզոնում զուգամիտվող (ինչպես և պետք է լիներ հեռանկարի կառուցման ժամանակ) բոլոր գծերը: Նրա նկարներում ինչքա՛ն շատ են իրականում հորիզոնական այդ գծերը: Քիվեր, տանիքներ:

Եվ ամենուր հորիզոնական գծերը մի քիչ ավելի հաստ են արված, քան պետք է, իսկ որոշ գծեր էլ անցնում են «անհրաժեշտի» սահմանը, այն սահմանը, որն իրականում է:

Բայց ահա էլի մի զարմանալի բան. Գոնզագոյի մոտ այդ բոլոր հեռանկարների համար միշտ ներքևից է դիտման կետ ընտրված: Ինչո՞ւ: Չէ՞ որ դիտողը նկարն ուղիղ իր դիմաց է պահում: Դա այն պատճառով է, որ դրանք բոլորը թատերական բեմանկարչի էսքիզներ են, բեմանկարչի նկարներ, իսկ թատրոնում հանդիսասրահը (համենայն դեպս «ամենակարևոր» մարդկանց համար նախատեսված տեղերը) ներքևում է, և Գոնզագոն իր կոմպոզիցիաները պարտերում նստած հանդիսատեսի համար է նախատեսում:

Սա պետք է իմանալ:

Արվեստի ստեղծագործությունն ընկալելու համար միշտ պետք է իմանալ ստեղծագործելու պայմանները, ստեղծագործության նպատակը, նկարչի անձը և դարաշրջանը: Արվեստը չի կարելի մերկ ձեռքերով բռնել: Հանդիսատեսը, ունկնդիրը, ընթերցողը պետք է «զինված» լինեն՝ զինված գիտելիքներով ու տեղեկություններով: Ահա թե ինչու այդքան մեծ նշանակություն ունեն ներածական հոդվածները, մեկնաբանությունները և ընդհանրապես արվեստի, գրականության, երաժշտության մասին աշխատանքները:

Զինվեցե՛ք գիտելիքներով: Իզուր չի ասված՝ գիտելիքը ուժ է: Բայց դա ոչ միայն գիտության մեջ է ուժ. ուժ է նաև արվեստում: Արվեստն անհասանելի է անուժին:

Գիտելիքի զենքը խաղաղ զենք է:

Եթե մինչև վերջ հասկանաս ժողովրդական արվեստը և այն չդիտես որպես



«պարզունակ» մի բան, ապա այն կարող է ելման կետ լինել ցանկացած արվեստ որպես ուրախություն, ինքնուրույն արժեք ընկալելու համար՝ անկախ տարբեր, արվեստն ընկալելուն խանգարող պահանջներից (առաջին հերթին անպայման «նմանության» պահանջը): Ժողովրդական ստեղծագործությունը սովորեցնում է հասկանալ արվեստի պայմանականությունը:

Ինչո՞ւ է այդպես: Ինչո՞ւ այնուամենայնիվ հենց ժողովրդական արվեստն է այդ սկզբնական և լավագույն ուսուցիչը: Որովհետև ժողովրդական արվեստում է մարմնավորված հազարամյակների փորձը: Մարդկանց «կուլտուրականների» և «անկուլտուրականների» բաժանելը հաճախ պայմանավորված է «քաղքացիների»՝ իրենց մասին ունեցած չափազանց մեծ կարծիքով և իրենց գերազնահատմամբ: Գեղջուկներն իրենց բարդ մշակույթն ունեն, որն արտահայտվում է ոչ միայն զարմանալի բանահյուսության (համեմատեք թեկուզ իր բովանդակությամբ խորը ռուսական գեղջկական երգը), ոչ միայն ժողովրդական արվեստի և հյուսիսի ժողովրդական փայտանյութով ճարտարապետության մեջ, այլ նաև բարդ առօրյայում, քաղաքավարության գյուղական բարդ կանոնների, ռուսական սքանչելի հարսանեկան ծեսի, հյուր ընդունելու ծիսակատարության, գյուղական ընտանեկան ընդհանուր ընթրիքի, բարդ աշխատանքային սովորույթների և աշխատանքային տոնակատարությունների մեջ: Սովորույթներն անհիմն չեն ստեղծվում: Դրանք նույնպես բազմադարյան ընտրության արդյունք են՝ ըստ նպատակահարմարության, իսկ արվեստը ընտրություն է ըստ գեղեցկության: Սա չի նշանակում, որ ավանդական ձևերը միշտ ամենալավն են, և պետք դրանց հետևել: Պետք է ձգտել նորին, գեղարվեստական հայտնագործությունների (ավանդական ձևերն էլ ժամանակին հայտնագործություններ են եղել), բայց նորը պետք է ստեղծվի հինը, ավանդականը հաշվի առնելով, որպես արդյունք, ոչ թե որպես հնի և ամբարվածի մերժում:

Քառասունվեցերորդ նամակ

Բարության ուղիներով

Ահա և վերջին նամակը: Նամակները կարող էին և ավելի շատ լինել, բայց արդյունքներն ամփոփելու ժամանակն է: Ափսոսում եմ, որ դադարեցնում եմ գրելը: Ընթերցողը նկատեց, որ նամակների նյութն աստիճանաբար բարդանում էր: Քայլում էինք ընթերցողի հետ, բարձրանաում աստիճաններով: Այլ կերպ չէր էլ կարող լինել. ի՞նչ իմաստ ունի գրելը, եթե նույն մակարդակին ես մնալու՝ մեկ-մեկ չբարձրանալով փորձի աստիճանները՝ բարոյական ու գեղագիտական փորձի: Կյանքը բարդացումներ է պահանջում:

Հնարավոր է՝ ընթերցողը նամակների հեղինակի մասին տպավորություն կազմեց, թե մի մեծամիտ մարդու է, որ փորձում է բոլորին ամեն ինչ սովորեցնել: Այնքան էլ այդպես չէ: Նամակներով ես ոչ միայն «սովորեցնում», այլև սովորում էի: Ես կարողացա սովորեցնել հենց այն պատճառով, որ միաժամանակ սովորում էի. սովորում էի իմ փորձից, ինչը



փորձում էի ընդհանրացնել: Շատ բան միտքումս ծագում էր հենց գրելու ընթացքում: Ոչ միայն պատմում, այլև իմաստավորում էի իմ փորձը: Նամակներս խրատական են, բայց խրատելով՝ ինքս էլ խրատվում էի: Ընթերցողի հետ բարձրանում էինք փորձի աստիճաններով, բայց ոչ միայն իմ փորձի, այլև շատ մարդկանց փորձի: Նամակ գրելիս ընթերցողներն ինձ օգնում էին՝ անլսելի զրուցելով ինձ հետ: Ի վերջո, ի՞նչն է ամենագլխավորը կյանքում: Գուցե գլխավորը յուրաքանչյուրի սեփական, անկրկնելի յուրահատկություններն են: Ամեն դեպքում յուրաքանչյուր մարդ պետք է ունենա իր գլխավորը: Կյանքը չպետք է փշրվի մանրուքների, չպիտի լուծվի առօրյա հոգսերում:

Եվ էլի, ամենաեականը՝ որքան էլ գլխավորը յուրաքանչյուր մարդու համար անհատական լինի, պետք է բարի և նշանակալի լինի:

Մարդ պիտի ոչ միայն բարձրանալ կարողանա, այլև ինքն իրենից, իր անձնական ամեօրյա հոգսերից բարձրանալ և մտածել իր կյանքի իմաստի մասին. պիտի կարողանա զննել անցյալն ու կանխատեսել ապագան:

Եթե միայն քեզ համար ապրես, սեփական բարեկեցության մասին մանր հոգսերով, ապա ապրածից ոչ մի հետք չի մնա: Իսկ եթե ուրիշների համար ապրես, նրանք կպահպանեն այն, ինչին ծառայել ես, ինչին նվիրել ես ուժերդ:

Նկատել է ընթերցողը, որ կյանքում ամեն վատ և մանր բան արագ մոռացվում է: Ինչ-որ ժամանակ մնում է հիմար ու եսասեր մարդու, նրա վատ արարքի նկատմամբ տհաճությունը, բայց մարդուն իրեն՝ չեն հիշում, նա ջնջվել է հիշողությունից: Ոչ մեկի մասին հոգ չտանող մարդիկ կարծես դուրս են մնում հիշողությունից:

Մարդիկ, ովքեր ծառայել են ուրիշներին, ծառայել են խելքով, կյանքում ունեցել են բարի և նշանակալից նպատակ, երկար են հիշվում: Հիշում են նրանց խոսքերը, արարքները, նրանց կերպարը, նրանց կատակները, երբեմն նաև տարօրինակությունները: Նրանց մասին պատմում են: Չարերի մասին էլ են երբեմն խոսում, բայց, հասկանալի է, ոչ բարի զգացմունքով:

Կյանքում պետք է սեփական ծառայումն ունենալ՝ ինչ-որ գործի ծառայել: Թող այդ գործը փոքր լինի, այն կմեծանա, եթե հավատարիմ մնաս:

Կյանքում ամենաթանկը բարությունն է, և ընդ որում խելացի, նպատակաուղղված բարությունը: Խելացի բարությունը ամենաարժեքավորն է մարդու մեջ, ամենագրավիչը և, վերջին հաշվով, անձնական երջանկության ամենաճիշտ ճանապարհը:

Նա է երջանկության հասնում, ով ձգտում է ուրիշներին երջանկացնել և ունակ է, գոնե ժամանակավորապես, մոռանալու իր շահերը, իրեն: Դա «չմանրվող դրամ» է:

Սա իմանալը, միշտ այս մասին հիշելը և բարության ուղիներով գնալը շատ-շատ կարևոր է: Հավատացե՛ք ինձ:

